



### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Խոր տրամադրությամբ դարձավ կր հետևիք լուրերուն պատերազմի մը, որ կը հարածէ աշխարհի այս շրջանը, ուր մեր եկեղեցին կ'ապրի եւ կը ծառայէ:

Մեր անուր Արեւելի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինը, 21 Մարտ 2003ին, Պէյրութի մէջ գումարեց իր լիանիստ ժողովը, մինչ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ անոր պիւնակներուն՝ Իրաքի եւ անոր շուրջ մղած պատերազմին խոռվիչ լուրերու մանրամասնութիւնները կը հասնէին:

Մեր եկեղեցիներուն եւ առաջնորդութեան անունով՝

Կը հաստատենք խաղաղութեան եւ հաշտութեան քրիստոնէական սկզբունքը, որուն ցոյց տրուած մարմնացումը մեր Տէր Յիսուս Քրիստոսի մէջ է:

Կ'ափսոսանք, որ պատերազմը ընտրանք կ'ըլլայ ներքին ու արտաքին հարցեր լուծելու:

Կը դատապարտենք երկու չափ-երկու կշիռի այն սկզբունքները, որոնք կը գործածուին կառավարութիւններուն կողմէ՝ միջազգային գեղնի վրայ իրենց կարգ մը շահերը ապահովելու համար, ի վնաս մարդարարածներու հանդէպ արդար վարմունքի:

Կը միանանք աշխարհատարած Ընդհանրական Եկեղեցիին՝ աղօթելով ներկայ տագնապին լուծումին, անվեղ ցոյց տրուելու, եւ մեր շրջանի ժողովուրդներուն հետպիտէտէ խորացող վերքերու բուժումին համար:

Կը յայտարարենք մեր պօրակցութիւնը տկարին ու անպաշտպանին: Յանձնառու կը մնանք խոնարհաբար հետեւելու մեր Տէր Յիսուսի քայլերուն՝ Անկէ ստրկելու, թէ ի՛նչպէս կրնանք մեզի մօտիկ ու հեռակայ շրջանակներուն մէջ խաղաղութեան գործիքներ ըլլալ:

ՆԱԽԱԳԱՀ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՄԵՐԶԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԻ ՀԱՅ ԱՌԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

### ԻՐԱՔԵԱՆ ԵՒ ՀԱՐՅՈՎ

## ՇԱՐԱԹԱՎԵՐԶԻ ՑՈՅՑԵՐԸ ԵՂԱՆ ՈՒՇԱԳՐԱԻ 3ԱՏԿԱՊԷՍ ՍԱՅՏԱՅԻ ՄԷԶ

Շարաթավերջին Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ տեղի ունեցան իրաքի պատերազմին դէմ բողոքի ցոյցեր:

Սալտայի մէջ զգալի էր Հրգայալայի գլխաւորութեամբ հոծ բազմութիւնը, իսկ ցուցարարներու ընդհանուր թիւը կը հասնէր շուրջ 6000ի:

Ցուցարարները «Մահ Ամերիկայի, մահ Իսրայէլի» կը գոռային:

Ցոյցեր տեղի ունեցան նաեւ Էսքրուայի կեդրոնատեղիին առջեւ, Լիբանանի մէջ քուէյթեան զեպպանտան առջեւ (ուր առնուեցան ապահովական խիստ միջոցառումներ), Սուրի մէջ, Թրիփոլի մէջ, ինչպէս նաեւ պաղեստինեան Սապրա, Պատտաուի եւ Պարէտ գաղթականներուն մէջ:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Յովհաննէս Գարապոյաճեանի մահուան Ժ. տարեկիցին առիթով, տիկին Զուարթ Գարապոյաճեան 20,000 լ.ն. ԲԱՎԼին:

●Փառն Առաքելեանի մահուան քառասունըօր առիթով, տեր եւ տիկին Աւո եւ Սիմա Փեղիվանեան 100,000 լ.ն. ԲԱՎԼին:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1.- Ընդգրկուած կան ինքնադարձանում (օգնութիւն, խորհուրդ եւ հետեւողականութիւն)

2.- Բրուտագործարան (Atelier de poterie) (դարձնաբաց, արտադրութիւն, բուժական արուեստ)

Հասցէ.- Միսիարեան վանք, Հազմի, Pain d'Or կից (հեռ. 05/451115)

Օրեր.- Երեքշաբթի եւ Ուրբաթ ժամը 8:00էն 13:00 եւ 16:00էն 20:00. Ժո Արզումանեան (հեռ. 05/451630)

ՀԱՍՏԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Կը ներկայացնէ՝

## ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ԳՐՈՂՆԵՐ... Ա.- ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

Խօսք կ'առնէ՝

### ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Երեքշաբթի, 25 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին, «Աղբալեան - Բ.Մ.Բ.Մ.» մարզաշաղկութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

ՇՐՄԻՐ

### ԻՐԱՔԵԱՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵՒՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ

## ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԺՈՂՈՎՆԵՐ ԳՈՒՄԱՐԵՑ ԺՈՍՊԼԱԹԻ, ՔԻՆՉԸՆԻ ԵՒ ՊՈԼՈՒԹԻՆԻ ՇԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ վարչապետարանին մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, Երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթը, որուն կ'ընկերակցէին նախարարներ Ղազի Արիտի եւ Մարուան Համատէ:

Հանդիպումին քննարկուեցան տեղական եւ շրջանային վերջին իրադարձութիւնները:

Վարչապետ Հարիրի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորի Պոլոթին: Քննարկուեցին առարկայ դարձած է նաեւ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի վերականգնումը եւ վստահեցուցուց, որ Բրիտանիա պատրաստ է առաջնահերթութիւն ընծայելու այս գործընթացին:

Պորթին վերահաստատեց Ռուսիոյ մերժողական կեցուածքը պատերազմին եւ դատապարտեց իրաքի ժողովուրդին դէմ գործադրուող մտերիկեան ըռնարարքները:

Վարչապետը ընդունեց



Հարիրի եւ Պոլոթին

նաեւ Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինչընը, որուն հետ քննարկեց շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները:

Հանդիպումին ետք Քինչըն յայտնեց, որ քննարկումի առարկայ դարձած է նաեւ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի վերականգնումը եւ վստահեցուցուց, որ Բրիտանիա պատրաստ է առաջնահերթութիւն ընծայելու այս գործընթացին:

Քինչըն աւելցուց նաեւ, որ Բրիտանիա կը փամբերիկեան ըռնարարքները, որ Լիբանան - Իսրայէլ սահմանային «կա-

պոյտ Գիծ»ը շարունակէ կայուն մնալ, որպէսզի չխանգարուի եւ չխախտի երկրին կայունութիւնն ու ապահովութիւնը:

Միւս կողմէ նշեք, որ վարչապետ Հարիրի այսօր առաւօտեան պիտի տեսակցի նախագահ զօր. էմիլ Լահուտի հետ, նախքան եւրոպական երկրներ իր շրջապոյտը, որուն ծիրէն ներս վարչապետը պիտի ուղղուի Յունաստան, Պելճիքա, Իտալիա, Գերմանիա եւ Ֆրանսա, ուր բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ պիտի քննարկէ միջազգային եւ շրջանային զարգացումները:

## ՎԱՂԸ՝ ԻՐԱՔԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՑՈՅՑ

Լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութիւններու ղեկավարներու ժողովին բխած մարմինը, կոր կը գլխաւորէ Զաիթ Խաթաբի եւ որուն մաս կը կապէ Հ. Յ. Դ. ի մէկ պատուիրակը, որ պիտի համակարգէ եւ հետապնդէ ժողովին որոշումներուն գործադրութիւնը, այսօր մամլոյ սենտիքայի կեդրոնատեղիին մէջ

պիտի տայ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին պիտի վերականգնէ իր աշխատանքներուն մասին:

Մարմինը նաեւ վաղը Երեքշաբթի յետմիջօրէին ժամը 3:00ին կը կապակարգէ մեծ ցոյց մը՝ Իրաքի առ ի պատակցութիւն, եւ որուն կը մասնակցին բոլոր կուսակցութիւնները: Ցոյցը կը կատարուի Թանգարանէն Էս-

քուս:

Միւս կողմէ, Մարմինը, որ սկսած է իր աշխատանքներուն եւ քաղաքական ու հոգեւորական անձնակազմով իրականացնելու հետ «Սյ խօսքով, Ռուսիա եւ Եւրոպա, որոնք յայտնապէս նոր համակարգին մէջ կը կապեն միացեալ ճակատ մը ընդդէմ Միացեալ Նահանգներ - Բրիտանիա դաշինքին, իրենց բարեկամական լաւ յարաբերութիւնները Հայաստանի հետ պէտք է վերատեսուեան ենթարկուի եւ շատ աւելի ամուր ու հաստատ հիմներու վրայ տեղադրեն պանդխտը:

### ԿՈՒՉՈՒԻ

●Կոտարար կամ խոհարարուի մը՝ հայկական զանգաւան ձաշեր եփելու համար: Դիմել հեռ. 01 - 255330 եւ 01 - 244330:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●«Մարտ 1», Մտքով Թերաճ Հայ Մամուլեցներու օրուան առիթով, «Չուարք-նոց» կեդրոնին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Տեր եւ տիկին Սիշէլ Խորոզեան 50 ամ. տղար, Արախան Պետրոսեան եւ ընտանիք 30 ամ. տղար, տեր եւ տիկին Եղիա Աճեմեան 10 ամ. տղար:

●Մարի Կիւմսեանի մահուան քառասունըօր առիթով, Պապայեան-Մարգարեան ընտանիք 20,000 լ. ն.:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Գեորգ Ճերիտեանի մահուան առիթով, ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Օրդ. Տիգրանուհի Պէքրեճեան 200,000 լ.ն., տեր եւ տիկին Աւետիս Տէր Արախանեան՝ 100,000 լ.ն., տեր եւ տիկին Փաք Արախանեան՝ 100,000 լ.ն., տեր եւ տիկին Սիմոն Ալեքսանտրեան՝ 100,000 լ.ն., տեր եւ տիկին Աւօ Փեղիվանեան՝ 100,000 լ.ն., տեր եւ տիկին Վրգէն Փեղիվանեան՝ 100,000 լ.ն., Էտրքիւնեան ընտանիք՝ 100,000 լ.ն., տեր եւ տիկին Արա Յակոբեան՝ 50,000 լ.ն., տեր եւ տիկին Շամբար Եսայեան՝ 50,000 լ.ն., տեր եւ տիկին Յարութ Եսայեան՝ 50,000 լ.ն., տեր եւ տիկին Սեդրակ Դանիելեան՝ 50,000 լ.ն., օրդ. Մարկո Սեփեճեան՝ 50,000 լ.ն., Ղազարոս Պալեան՝ 50,000 լ.ն., տեր եւ տիկին Պերճ Ժալիբեան՝ 20,000 լ.ն., տեր եւ տիկին Պողոս Ժալիբեան՝ 20,000 լ.ն., տեր եւ տիկին ժան Առաքելեան՝ 20,000 լ.ն., Սալթալի ընտանիք՝ 20,000 լ.ն.:

●Բիւզանդ Ստրոպեանի մահուան քառասունըօր առիթով, ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Մ. Սահանգեբեդ՝ տեր եւ տիկին Նիկողոս եւ Լուսին Արզումանեան՝ 100 տոլար, տեր եւ տիկին Յարութ եւ Անի Ղազարեան 50 տոլար:

Հ. Բ. Բ. Մ. - Հ. Ե. Բ. «ՎԱՂՏԱՍԱՐ ՓԱՓԱՋԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ՝

## ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆԻ «ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ» Ը

Հովանաւորութեամբ՝

### Շ. Ե. Բ. Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բեմադրութեամբ՝

## ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ

(Հայրենի վաստակաւոր բեմադրիչ)

Տեղի կ'ունենայ 27, 28, 29, 30 Մարտ, 3, 4, 5, 6, Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 8:30ին, ցերեկոյից 6 Ապրիլ ժամը 4:00ին, «Յակոբ Տէր Մեղրեան» բաւերասրահին մէջ:

●Տոմսերը ապահովելու համար դիմել՝ Շ. Ե. Բ. ի գրասենյակէն, «Տեմիճեան» կեդրոն, վարչական անդամներէն եւ ելոյթի օրերը կիշէն:

### ՆՇՄԱՐ

## ԻՐԱՔԵԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԼԱՄԱԳՈՅՆՍ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԵ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՒՆԵՐՈՒ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

«Աղբալ»ի ներկայ համարին առաջին էջով տրուած չորս լուրերը հաւանաբար արագ ակնարկով մը կուզադիպուիս կրնան թուիլ ընթերցողին, սակայն առաւել ուշադրութեամբ կարդացողը անմիջապէս պիտի հաստատէ, թէ կուզադիպուիս չէ կատարուածը, այլ՝ քաղաքական ուղղութիւններու ուշագրաւ տարբերութիւն:

Այսպէս, երբ մէկ կողմէ Թուրքիա, Ալբերպէյճան եւ Վրաստան յստակօրէն փրօ ամերիկեան (ոչ քանի, այլ՝ գործով) կեցուածքներ կը դրսեւորեն, Ուաշինկթընի հիւն-հնապանդ սպասարկութիւններ կը կատարեն, միւս կողմէ Հայաստան կը մերժէ Իրաքի հետ դիւանագիտական կապերը դադարեցնելու ամերիկեան կոչը:

Իրաքանչիւր երկիր պատ է անշուշտ իր կեցուածքներուն մէջ: Ի վերջոյ ինչ որ մէկուն համար ճիշդ է անպայմանօրէն չի նշանակել, թէ ճիշդ է նաեւ միւսին համար. իրաքանչիւր ունի իր շահերը, հարցերը դիտելու իր եղանակը:

Սակայն երբ նկատի կ'ունենանք վերոյիշեալ չորս երկիրներուն տարածաշրջանը, ուր աւելի քան երեք դարէ ի վեր տիրապետող գլխաւոր ուժը մինչեւ օրս եղած է Ռուսիան, առաւել, երբ նկատի կ'ունենանք յատկապէս վերջին շրջանին իրաքեան հարցով ուրուսագծուող աշխարհաքաղաքական նոր համակարգը, կը նշարենք, թէ ի վերջոյ ի՛նչ է, որ կ'անցնի - կը դառնայ:

Անշուշտ այս հողովոյթին շատ մօտէն կը հետեւին ամէնէն աւելի իրենք, մեծ պետութիւնները, որոնք շատ աւելի շահագրգռուած են քան մենք, խնդրոյ առարկայ երկիրներ: Ուրեմն, տրամաբանօրէն նաեւ անոնք այս նոր համակարգին մէջ ներկայ կեցուածքներուն հիման վրայ պէտք է ճշդէն իրենց յարաբերութեանց մակարդակը կրկնապէս տարածաշրջանի երկիրներուն հետ: Այլ խօսքով, Ռուսիա եւ Եւրոպա, որոնք յայտնապէս նոր համակարգին մէջ կը կապեն միացեալ ճակատ մը ընդդէմ Միացեալ Նահանգներ - Բրիտանիա դաշինքին, իրենց բարեկամական լաւ յարաբերութիւնները Հայաստանի հետ պէտք է վերատեսուեան ենթարկուի եւ շատ աւելի ամուր ու հաստատ հիմներու վրայ տեղադրեն պանդխտը:

Պէտք է մտնայ նաեւ, որ գէթ վերջին երկու - երեք տարիներուն, Հայաստան առաջին անգամ չէ, որ այս ուղղութեան նկատմամբ անկեղծութիւն կը դրսեւորէ ու վստահութիւն կը ներշնչէ, ինչպէս նաեւ առաջին անգամ չէ, որ Թուրքիա, Ալբերպէյճան եւ Վրաստան անոր ճիշդ հակառակը կ'ապացուցեն...

ՀՐԱՉ ՎԱՐՉԱՊԵՏԵԱՆ

### ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՒՏԻՆ

●Գեորգ Ճերիտեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Վարուժան Աղասարգիսեան 100,000 լ.ն. Տեր եւ տիկին Վրգէն Աղասարգիսեան 100,000 լ.ն. ●Բիւզանդ Ստրոպեանի մահուան քառասունըօր առիթով, Համագայիցի Մ. եւ Շ. Արսլանեան ձեմարանի ծնողական խորհուրդի անդամներ 100,000 լ.ն.

### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒ ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

### ԿՈՉ

Նկատելով, որ Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը արդէն սկսած է Պուրճ Համուտի «Տըրուէնի» Հայ Կաթողիկէ գերեզմանատան հողաշերտերու սեփականագիրները փոխարինել ճորտով, 2004ի Յունուարի 1էն սկսեալ ինչ սեփականագիրները չեղեալ պիտի համարուին:

Շեւեալքար, կը հրաւիրենք այն բոլոր ազգայինները, որոնք վերոյիշեալ գերեզմանատան մէջ հողաշերտեր ունին՝ «վարձու կամ սեփականութիւն», մինչեւ 29 Մայիս 2003 կապ պահեն Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութեան հետ՝ յստակացնելու համար իրենց ունեցած հողաշերտերուն կարգավիճակը:

Վերոյիշեալ պայմանաժամէն ետք, ժողովրդապետութիւնը ոչ մէկ պատասխանատուութիւն կը ստանձնէ կատարուելիք նոր դատարաններուն գծով:

Ժողովրդապետութեան Գրասենյակի ժամերն են՝ կէսօր առաջ ժամը 9:00-1:00, իսկ կէսօր ետք ժամը 4:00-6:00 Երկուշաբթիէն մինչեւ Կրկուշաբթի: Հեռ. 01-261505:

### Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

### Շրապարակի վրայ է արդէն

### «ԴԻՏԱԿ» Ի

### Փետրուար-Մարտ թիւը

# ՊԵՅՐՈՒԹՎԱԶՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱԽՏԸ ՈՒՆԵՑԱԻ ԸՄԲՈՇԽՆԵԼՈՒ ՎԱՐԴՈՒՂԻ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ ԵԶԱԿԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Երեկ, երեկոյան ժամը 20:30ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանի, Համազգայինի Այնճա-րի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «Լուսարձակ 40» թատերախումբը ներկայացուց Ալեքսանտրո Բասոնայի «Ծառերը կանգուն կը մահանան» թատերախաղը, բեմադրութեամբ հայրենի բեմադրիչ Ռուպերթ Առաքելեանի:

## ՈՉ ԵՄ Է ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ «ԱՊՈՒ ՈՒՍԻՅ» (ԱՆԹՈՒԱՆ ՏԱԼԱԹԻ)

Երեկ, խոր ծերութեան մէջ իր մահկանացուն կնքեց Լիբանանի քաղաքական և շրջանակներու մէջ հանրածանօթ դէմք մը՝ լուսանկարիչ Անթուան Տալաթի, աւելի ծանօթ՝ «Ապու Ուատիհ» ծածկանունով:

1946-ին ի վեր նախագահական պալատի պաշտօնական լուսանկարիչը հանդիսացած Տալաթի սեփականատէրն էր նաեւ «Տալաթի - Նոհրա» ընկերութեան, որ Լիբանանի բեմի քաղաքական լուսանկարիչներու ամէնէն գործօն հաստատութիւնն է մինչեւ օրս: Անթուան Տալաթի բազմաթիւ շքանշաններու արժանացած է նոյնիսկ արաբական այլ երկիրներու նախագահներու կողմէ, ինչպէս նաեւ երկար տարիներ ընտրուած է Լիբանանի լուսանկարիչներու սենտիքայի անդամ, վարելով անոր նախագահի պաշտօնը:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՆԱԽԱԳԱՀ գօր. Էմիլ Լահուտ շաբաթավերջին յայտարարեց, որ Իրաքի ենթարկուած քանդուածի պատերազմը կը խաթարէ միջազգային օրէնքներն ու մարդկային իրաւանց յարգումը, ինչպէս նաեւ միջազգային ուխտերը:

Նախագահ Լահուտ աւելցուց, որ ճշեալ պատերազմը գործադրողները երբեք չեն կրնար պահուել տիլ «ժողովուրդներու իրաւունքներու պաշտպանութեան» կարգախօսին ետին, որովհետեւ անոնք կը հարուածեն պատերազմը դատապարտող միջազգային կամքը ու խղաղութեան ամէն ճիգ:

Նախագահ Լահուտ ողջունեց Իրաքի դեմ պատերազմը մերժող երկիրներն ու ժողովուրդները եւ վերահաստատեց լիբանանցի ժողովուրդին գօրակցութիւնը իրաքի ժողովուրդին:

● ԱՐՏԱԲԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ յայտնեց, որ վրանգաւոր է ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը շրջանցել եւ անոր առաքելութիւններէն, պարտականութիւններէն եւ կարողութիւններէն անդին անցնել:

Համուտ շեշտեց, որ արաբական երկիրներու գերիշխանութիւնն ու ապահովութիւնը պէտք է պահուի Ան աւելցուց, որ Պաղատի լիբանանեան դեսպանատունը ոչ մէկ վնաս կրած է:

Համուտ ցաւ յայտնեց Իրաքի մէջ տեղի ունեցող ամերիկեան ու մարտնչականներու համար, որոնց գոհ կ'երթան քաղաքայիններ եւ մշակութային վայրեր ու կղերներ:

Անդրադառնալով յառաջիկայ օրուան Գահիրէի մէջ տեղի ունենալիք Արաբական Լիգայի արտաքին գործոց նախարարներու վեհաժողովին, Համուտ յոյս յայտնեց, որ նիստին ընթացքին պարզապէս չքննարկուին շրջանային զարգացումները եւ նիստը չբաւարարուի միայն հաղորդագրութիւն մը հրատարակելով, այլ քննարկէ Իրաքի տագնապի գործնական լուծման տարբերակները:

Պատասխանելով այն հարցումին, թէ ամերիկեան պահանջով մը Լիբանան պէտք է իր դիւանագիտական յարաբերութիւնները սառեցնէ Իրաքի հետ եւ տուն ուղարկէ Իրաքի դիւանագետները, Համուտ ըստաւ, որ Լիբանան ինք կ'որոշէ միջազգային իր յարաբերութիւնները, հիմնուելով միջազգային օրէնքներու վրայ:

● ՄԱՐՈՒՆԻՆԵՐՈՒ Նապալլա Պուրթու Սֆէյր պատրիարք Կիրակի օրուան իր քարոզիմ մէջ գգու-շացուց Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի վրայ գործադրուող պատերազմին հակազդեցութիւնները եւ կոչ ուղղեց՝ աղօթելու, որպէսզի անմիջապէս աւարտի պատերազմը եւ տիրէ խղաղութիւնը: Սֆէյր պատրիարք ընդգծեց, որ Երկրի պատերազմը վնասներ եւ աղետներ կը պատճառէ, պիտի լրացնուի վնասներ եւ աղետներ կը պատճառէ, պիտի լրացնուի վնասներ եւ աղետներ կը պատճառէ, պիտի լրացնուի վնասներ եւ աղետներ կը պատճառէ:

Սֆէյր պատրիարք ընդգծեց, որ Երկրի պատերազմը վնասներ եւ աղետներ կը պատճառէ, պիտի լրացնուի վնասներ եւ աղետներ կը պատճառէ, պիտի լրացնուի վնասներ եւ աղետներ կը պատճառէ:

# «ԱՇԽԱՐԸ ԸԱՅԱՍՏԱՆ» ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՇԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ



Արարատը

Շաբաթ, 22 Մարտի երեկոյան ժամը 19:00ին, Անթիլիասի մայրավանքին մէջ տեղի ունեցաւ արւեստագէտ - լուսանկարիչ Յովհաննէս Ճէրէճեանի (Շիրապ) սահիկներու եւ լուսանկարչական շահեկան ցուցահանդէսը՝ կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵ-ՀՈՄ):

Մեծ թիւով երիտասարդ լուսանկարիչներու եւ հիւրերու ներկայութեամբ տեղի ունեցած հանդիպման ընթացքին, աւելի քան երկու ժամուան տևողութեան, Յ. Ճէրէճեան երկու հանգրուանով ժամանակաշրջաններու ընթացքին նկարուած Արեւմտեան Հայաստանի վան, Աղթամար, Նեմրոք, Տարօն, Սասուն, Կարս եւ Անի քաղաքներու տեսարաններէն, խաչքարներէն ու հոգեւոր-մշակութային պատմական հնավայրերէն:

Յուցադրուած իւրաքանչիւր տեսարանին կ'ընկերակցէր Յ. Ճէրէճեանի մանրամասն քացատրութիւնը տուելով տեսարանին մասին: Յուցադրութեան վերջին բաժինին մէջ տեղի ունեցաւ դարձեալ արւեստագէտին լուսանկարած Արդի Հայաստանէն եւ Արցախէն պատկերներու ներկայացում, որոնց մէջ ուշագրաւ էին մանաւանդ Հայաստանի անկախութեան տա-

## ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Տիկին Սեդա Մեւրոպեան, տնի տիկին Թորոսի Է. Զանգի Մեւրոպեան, տնի տիկին ժամօն եւ Թամար Պրապրեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնուն, հոր եւ մեծ հոր՝ ԲԻԻԶԱՆԴ ՍԵՍՐՈՊԵԱՆԻ մահուան սուգին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՌՈՒԲԵՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ

ՇԱՐԹՈՒՄԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Ա.- CINE CLUBի յանձնախումբը կազմակերպած է՝ «SHINE» ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բեմադրիչ՝ SCOTT HICKS  
Գլխավոր դերասան՝ GEOFFREY RUSH  
Չորեքշաբթի, 26 Մարտ 2003, երեկոյան ժամը 8:00ին:

Բ.- Մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ՝ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ

Շաբաթ, 29 Մարտ 2003, երեկոյան ժամը 7:00ին:

ՇԱՆՈՑ. ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՍԱՆ «ԱԶՍԱՍԱՐՏ» ԱՎՈՒՄԲԻ «ՉՈՒԽԱՏԱՐԵԱՆ» ՍՐԱԿՈՒ ՄԵԶ

ՍՈՒՏԸ ԱԶԱՏ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

# السفر

22 Մարտի օրաթերքերը կեդրոնացած են ամերիկացիներուն կողմէ Իրաքի վրայ գործադրուող օդային եւ ցամաքային յարձակումներուն, աշխարհի տարածքին տեղի ունեցող ցոյցերուն եւ ընդհանրապէս պատերազմարձագանգներուն վրայ:

«Նասա» գրած է, թէ կրակի գօտին շրջապատած է Պաղտատը, իսկ ամերիկացիները կը գտնուին Պարսիկի սեմին: Մուսուլ եւ Քերքուք կը ուժեղանան, Ումէյլ Քասրը եւ Պաղտատ կը հաստատուին Պաղտատը, թէ պիտի շարունակէ դիմադրել:

Ըստ թերթին, պատերազմը մերժող բողոքի ցոյցեր կը կատարուին աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ. հապարակուած են շնորհիւ այդ լուսանկարներուն: Ան յոյս յայտնեց, որ Յ. Ճէրէճեանի լուսանկարած հայկական քանակը իր խորիւտ քայլերով օր մը կը տողանցէ նաեւ հայութեան պատմական հայրենիքին մէջ:

«Թրքական բանակը մտաւ Իրաք, իսկ Ուաշինգթոն այդ քայլը սիրով չընդունեց: Աւազակները մէջ վիրաւորներ արձակագրուեցան ցուցարարներուն եւ պահովակալն ուժերուն միջեւ բախումի մը ընթացքին: Յոյցեր կը զիջուին ընթացքին: Յոյցեր տեղի ունեցան նաեւ Քաթարի եւ Քուէյթի հետպահանստուներուն առջեւ», գրած է օրաթերթը:

«Սաֆիր» նշած է, թէ Պաղտատի կեդրոնը կը ճարձատի կրակի բողոքով եւ ամերիկացիները Ֆաուէն Մուսուլի հասան: Թէյ Ալի կը մասնակցի Իրաքի պատերազմին. ամերիկացիները կը գործադրեն իրաքեան սարքեր:

Ռամաֆելտ եւ Փաուլը Սատտամի տապալումը կը նկատեն մօտալուտ եւ հաստատ. Պուշ ամերիկացիներուն կը յիշեցնէ, թէ պատերազմը երկար ու վտանգաւոր է:

Թերթին համաձայն, պատերազմին ընդդիմացող ցոյցերը կ'եռան աշխարհի չորս անկիւններուն. 200 հապար ցուցարարներ Աթէնքի, իսկ 50 հապար՝ Ճափոնի մէջ «ոչ» կ'ըսեն պատերազմին: Արաբական պայրոթը

«ՎԱՍՆԵ ԶԱՅՆԻ» ԱՅՍՈՐՈՒՄԱՆ ՅԱՅՏԱԳՐՆԵՐԸ

- Ժամը 8:00 Եկեղեցւոյ մէջ
- Ժամը 8:45 Աստղեր
- Ժամը 10:05 Սարտն ճորտն
- Ժամը 12:00 «Մաքուր պահեց հայերը»

Շահանդուկս  
● Ժամը 3:00 Արաբերէն յայտագիր հարցազոյց՝ «Բնութիւնը Մանուկներուն Հանդէպ» Միութեան տնօրէնուհի, տիկին Մունա Զոլպաիի հետ- Ժամը 4:00 Շաբաթը մէկ ժամուան մէջ
- Ժամը 5:00 Գուսան
- Ժամը 7:30 Եկեղեցւոյ մէջ (կրկն)
- Ժամը 8:00 Մրցում - խաղ

ԳՐԱԲՈՒԱԾ ՕՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՏԱՍՆԱԾԻԿ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՔԱՐՎԱՅԻՆ» ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ԶԵՆՆԱՐԿ

«ՄՈՒՍ» ՍՐԱԿՈՒ ՄԵԶ, 31 ՄԱՅԻՍ 2003

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

«Իր ամուսնոյն՝ Ժաք Զաւուսեանի մահուան քառասունընդհարից տարեկանը, տիկին Զաքէ Զաւուսեան կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները:

Շ. Յ. Պ. «Ռոստոմ» ակումբին՝ 100,000 լ.ո.  
ԼՕՍԻ Կայաքէն մասնաճիւղին՝ 100,000 լ.ո.  
Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ՝ 200,000 լ.ո.



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐՈՎ, ՊԱՐՏՔԻ ԶԳԱՑՈՒՄՈՎ

## Դաշնակցութիւնը պատրաստ է Ազգային ժողովի ընտրապայքարին

Դաշնակցութիւնը ամէն պատճառ կը տեսնէ, որ պէտք է իր առաւելագոյնով մասնակցի Հայաստանի Ազգային ժողովի Մայիս 25ի ընտրութիւններուն: Վկայ՝ Ազգային ժողովի պատգամաւորութեան համար Դաշնակցութեան առաջնորդ 101 թեկնածուներու համամասնական ցուցակը, որ բառին բուն իմաստով ընդգրկուել է՝ թէ՛ սեփական մարզութիւն, թէ՛ համակիր եւ ուղեկից շրջանակը, թէ՛ հանրապետութեան մարզերն ու շրջանները առաւելագոյնս ներկայացնելու առումներով:

Նման ինքնուրոյն եւ ընդգրկուել ցուցակով Ազգային ժողովի յառաջիկայ ընտրութեանց մասնակցելու Դաշնակցութեան որոշումին տուն տուն առաջին եւ զլիսաւոր պատճառը, անշուշտ, վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումն ու հայրենիքի բազմակողմանի զարգացումը առաջադրող Հ. Յ. Դ. քաղաքական ուղեգիծի իրագործման համար ստեղծուած պատեհութիւնն է՝ քաղաքական յարմար պահի առումով:

Փաստորէն, Մարտ 5ի նախագահական ընտրութեամբ, մեր ժողովուրդին կայացած ընտրազանգուածը իր վստահութեան քուէով որոշեց շարունակել 1998ին որդեգրուած քաղաքական այն ուղեգիծը, որուն զլիսաւոր առաջնորդներն են՝ ապահովել Արցախի ազատագրութեան իրաւական ամրագրումը, հաստատել ժողովրդավարական ու մաքուր ձեռքբերով իշխանութիւն եւ իրականացնել ընկերային թեքումով կառավարում ու արդիւնաբերութեան խթանումով տնտեսական տաղանապարտ յաղթահարելու քաղաքականութիւն:

Նախագահ Ռ. Քոչարեանի վերընտրութիւնը, իր բեւ յաջողութիւն, մենք կը նկատենք մեր ժողովուրդի մեծամասնութեան կողմէ պաշտպանութիւնն ու որդեգրումը ճիշդ այն առաջնորդներուն, որոնց հիման վրայ Դաշնակցութիւնը հանդիսացաւ Ռ. Քոչարեանի նախագահական թեկնածութիւնը առաջադրող եւ պաշտպանող զլիսաւոր կուսակցութիւններէն մէկը, իսկ հանրապետութեան հետագայ քաղաքական ուղեգիծի իրականացման առումով՝ ամէնէն յանձնառուն:

Հետեւեալը ակնյայտ փաստ է, որ Ազգային ժողովի մօտալուծ ընտրութիւններէն ընտրազանգուածը ակնկալէ ձեւաւորումը միեւնոյն այդ առաջնորդներուն իրականացման յանձնառու օրէնսդիր իշխանութեան: Մեծամասնութիւն կազմող ընտրազանգուածի այդ սպասումն է, որ քաղաքական

յարմար պահը կ'ընձեռէ Դաշնակցութեան համար, որպէսզի անկախ ցանկով եւ առաւելագոյն արդիւնքի հասնելու հաստատակամութեամբ լծուի Ազգային ժողովի ընտրապայքարին:

Նմանապէս տարրեր մեկնակէտ չունի անկուսակցական, բայց քաղաքական եւ գործարար դաշտի հանձնարար գործիչներու յայտնութիւնը Հ. Յ. Դ. համամասնական ցուցակին վրայ, որոշ պարագաներու նաեւ՝ առաջնային կարեւորութեամբ: Ծանօթ է, որ այժմու՝ իր պաշտօնավարութեան աւարտին մօտեցող Ազգային ժողովի գործունէութեան ամբողջ ընթացքին Դաշնակցութիւնը հետեւողականօրէն պայքար մղեց, որպէսզի օրէնքով ամրագրուի համամասնական ցուցակով ընտրուած պատգամաւորներու դերակազմութիւնը: Միայն այդ ճամբով Հայաստանի օրէնսդիր իշխանութիւնը ի վիճակի է քաղաքական դիմագիծ նուաճելու եւ, սկզբունքային ու յանձնառու քաղաքական ուժեր ներկայացնող իր քաղաքութեամբ, ընդառաջելու նոյնինքն ընտրազանգուածի արդար սպասումներուն: Իրբեւ այդպիսին, Հ. Յ. Դ. պատգամաւորութեան համամասնական ցուցակին վրայ արժանի տեղ գտած են անկուսակցական քաղաքական գործիչներ եւ համակիր գործարարներ, որոնք կողմնակից են մեր զլիսաւոր առաջնորդներուն, եւ որոնց օրէնսդիր աշխատանքի ներդրումին յոյսեր կապած է մեր կուսակցութիւնը, եւ՝ ոչ միայն մենք. նոյնքան յոյսեր կրնայ կապել նաեւ ընտրազանգուածը:

Բացի քաղաքական նպաստաւոր պահու գործունէն, յառաջիկայ Ազգային ժողովի կազմին մէջ քաղաքական իր կշիռին համապատասխան տեղ նուաճելու Դաշնակցութեան ինքնավստահութեան ունի նաեւ ներշնչման երկրորդ աղբիւր մը, որ խորքային ու ենթակայական է՝ նոյնքան այժմէական կարեւորութիւն ներկայացնելով հանդերձ:

Ոստքը կը վերաբերի այն փաստին, որ, վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան կայացման ակնյայտ փաստ տարիներու ընթացքին առաջին անգամ ըլլալով Դաշնակցութիւնը խորհրդարանական ընտրութեանց կը ներկայանայ ինքնուրոյն ու անկախ կողմնորոշուելու եւ գործելու իր բնական իրաւունքը լիովին նուիրագործած՝ իրբեւ այդպիսին կայացած խորհրդարանական կուսակցութեան հաստատուն կենսափորձով:

Արմատակարարօրէն թօթափելով ՀՀ նախկին իշխանութեանց շրջանին իրեն պարտադրուած ամէն կարգի կաշկանդումները՝ վերջին չորս-հինգ տարիներուն Դաշնակցութիւնը եղաւ բացառութիւն կազմող այն կուսակցութիւնը, որ կրցաւ յաղթահարել Հայաստանի կուսակցութիւնները վարակած՝ անպայման ընդդիմադիր կամ դիմադիր դաշտին պատկանելու եւ ըստ այնմ ներքին ճեղքերու մատնուելու ընդհանուր փորձութիւնը: Եղաւ գործակից հանրապետութեան նախագահին եւ մաս կազմեց իրերաջախող կառավարութեանց, բայց զոյգ պարագաներուն ալ կառչած մնաց քաղաքական որոշակի ուղեգիծի շաղկեցելու իր անհրաժեշտութեան եւ յանձնառուութեան՝ մերժելով նոյնացումը իշխանութեան եւ կառավարման համակարգի արատաւոր փոփոխումն կամ յանուն ազատ-չուկայական տնտեսավարման կիրարկուած չարահաճումներուն հետ: Ընդհակառակն, իրեն վերապահեց ինչպէս Հայաստանի իշխանութեանց արտաքին կամ ներքին քաղաքականութեան դրական ուղղութիւններն ու քայլերը ողջունելու, նոյնպէս եւ սխալներն ու շեղումները մերժելու իրաւունք՝ ըստ ամենայնի քաղաքական գործընկերութեան տալով ուղեգիծային նշանակութիւն եւ արժէք:

Ահա՛ այս բոլոր առումներով Դաշնակցութիւնը պատրաստ է տէր կանգնելու իր ընտրազանգուածի սպասումներուն՝ ժողովրդավարական հզօր պետութիւն կերտելու եւ մեր ժողովուրդը ընկերային-տնտեսական այս ծանր իրավիճակէն դուրս բերելու ուղղութեամբ:

Իր բոլոր ուժերը լարելով եւ պարտքի զգացողութեամբ առաջնորդուելով:

«ԴՐՈՇԱԿ»

2003, Մարտ

**PHOTO NERSES**  
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

**ՀԻՄՆԱԳՐՄԱՆ**  
**25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ**  
**36 photo ֆիլմի**  
**նկարահանումը**  
**միայն 8,000 Լ. Ո.**  
(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ)  
... ԵՒ US\$25 ՆԱԵՒ  
Լուսանկարի ցուցակը + ավտոմատ + ցկարի INDEX մը

4ը ցկարներ փոքրերու լուսանկարներ ՉԱՍԿՈՒԱՆ յատուկ յարդարանքով

PHOTO NERSES: Պուրճ Կամուտ, Քաղաքապետարանի փողոց «Սանթր ԱՐԻՆ»ի դիմաց:  
Շեռ. 01 - 261858 եւ 01 - 255992

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՆՌԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11Ը ՍԿՍԱԻ 500 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՒ ԴԵՌ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Ահաւոր սարսափ մը պատած է Ամերիկայի վրայ: Սեպտեմբեր 11էն ի վեր Ամերիկայի ժողովուրդը դէմ յանդիման կը գտնուի իր տկարութեան հետ: Ահաբեկչութեան սպառնալիքը միշտ կան մահ կրնայ պատահիլ որեւէ ժամանակ եւ որեւէ տեղ: Ո՛չ ժամանակացոյց կայ, ոչ ալ ուրիշ երկիր մը, որ կրնայ թիշորախ դառնալ Միացեալ Նահանգներուն, եթէ՛ Ամերիկա ահաբեկչական այլ սարսափելի արարքի մը ենթարկուի:

Սեպտեմբեր 11էն ետք հետեւեալ հարցադրումը կատարուեցաւ. ինչո՞ւ կ'ատեն մեզ: Հաւանաբար հարցումը այն ձեւով պէտք է հարցուի. ի՞նչ լրտեսներ, որպէսզի ատեն մեզ:

Ամերիկա այսօր կը դիմադրուէ այն սարսափը, գոր աւերիկացի հնդիկներ կ'ապրին աւելի քան 500 տարիէ ի վեր: Մեր նախահայրերը չէին գիտեր, թէ ի՞նչ է վայրագութիւնն ու ահաբեկչութիւնը՝ նախքան ամերիկացիներուն ներխուժումը: Բայց մահը եկաւ:

Եկաւ ընդհանրական զէնքերէ, ինչպէս՝ ծաղկախոտ կրող ծածկոցներէ, որոնք բաժնուեցան զոհերուն:

Եկաւ զէնքերէ, որոնք խտրականութիւն չզրկին կուսակցութիւնը, կիներու, ծերերու եւ փոքրերու միջեւ:

Եկաւ «Մանիֆեսթ ճակատագիր»ի անխիղճ պատգամով, որուն համաձայն, Աստուծոյ կամքն է, որ ամերիկացիք դէպի արեւմուտքը կարճակուրտ:

Հնդիկներ ջարդուեցան անասուններու նման: Յաճախ խաղաղութեան դրօշը բարձրացուցած եւ մերթ՝ ամերիկեան դրօշը, երբ կը փորձէին իրենց ջարդարներուն բացատրել, թէ իրենք վատ ժողովուրդ մը չէին:

1890ին Վուտթոք Նիւ մէջ տեղի ունեցաւ ջարդ մը, գոր սպիտակամորթներ կոչեցին վերջին մեծ ճակատամարտը հնդիկներու եւ Միացեալ Նահանգներու բանակին միջեւ: Բայց այդ ճակատամարտ չէր, այլ վերջին սարսափելի արարքը՝ անմեղ տղամարդոց, կիներու եւ մանուկներու նկատմամբ:

Անոնք մեռան առանց զխանայու, թէ ինչո՞ւ: Անոնք մեռան ցուրտ ձմարն ձիւնին մէջ, փախուստի ճամբուն վրայ: Երբ մարդ արարածներ

հրապարակայնօրէն մարդ չեն նկատուիր, անոնց մահը կը դառնայ անարժէք: Օրուան ազգային մամուլը, հնդիկները ներկայացնելով իրբեւ բարբարոսներ, բռնաբարոյներ եւ առեւանգողներ, ենթահող կատարաստեց Վուտթոք Նիւի Մամուլը ենթահող պատրաստեց դէպի արեւմուտք տարածուած մին, որ հազարաւոր կեանքեր պիտի խլէ: Հոնահանգներուն, եթէ՛ չըլլաւ Կրիլի կը զրէր: «Արեւմուտք ուղղուէ, երիտասարդ, արեւմուտք ուղղուէ»:

Եւ այդպէս ըրին: Հազարաւորներ եկան հող, ոսկի եւ բնական արտադրութիւնները գրաւելու: Այդ բոլորին եւ իրենց միջեւ կանգնողները հնդիկներն էին: Անոնց հողն էր:

Ճիշդ այնպէս, ինչպէս քրիստոնեան խաչակիրները, գոր Աստուծոյ կամքը նկատեցին սպաննել արարները եւ գրաւելու անոնց հողերը, որովհետեւ անոնք արարները նկատեցին նուազ քան մարդ, այդպէս ալ ամերիկեան բանակը այս բռնարարքները գործեց: Տարբերութիւնը այն է միայն, որ արարները պարտութեան մատնեցին խաչակիրները:

Յաճախ միախոնարներ կ'ուղարկուէին, որպէսզի հնդիկները քրիստոնեանց անցնեցնէին: Անոնք 500 տարիներուն անցնող 500 տարիներուն անեւարար յարձակումի ենթարկուած են:

Ամերիկացի հնդիկ գիտէ, թէ ի՞նչ կը նշանակէ ահաբեկչութեան սպառնալիքին տակ ապրիլ: Հիմա ամբողջ Ամերիկան կը սորվի այդ մէկը...

«ՔԱՄԵՆ ՏՐԻՄՆ»  
ԿԱՅՔ

**ՀԱՅԿԱԳԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՄ**

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ**  
**ԵՒ ԻՐ**  
**ԾԻԱԾԱՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ**

Մահուան հազարամեակին առիթով՝ վերաթերթուում մը գրական - իմացական աւանդին

Կը բանախօսէ՝  
(Աճապարհ լեզուով)

**ՓՐՈՑ. ՍԵՂԱ Պ. ՏԱՏՈՅԵԱՆ**  
(Դասախօս Պէյրուսի Ամերիկեան համալսարանի)

Տեղի կ'ունենայ Հրնգաբքի. 27 Մարտ 2003. Երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան համալսարանի Մեխակեան սրահին մէջ:

«ԱԶԳԱԿ»-Ի  
**ՀԵՌԱԶԱՅԻՆ ԹԻՒԻԵՐԸ**  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետուեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

# Աշակուբայքի Էջ

## ԵՐԲ ԱՆԻՆ ՄՆՈՒՄ Է ՀԵՌՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐ

### ՅԱԿՈՒԲ ԳԵՐՈՐԳԵԱՆ

Աւելի քան երկու տասնամեակի փորձառութենէ ետք, Յակոբ Գէորգեան այսօր իր ստեղծագործական ինքնուրույն ուղին ճշգրտած կը թուի ըլլալ: Անոր վերջին կտաւները ցոյց կու տան, թէ այս ինքնու գեղանկարիչը անընդհատ որոնումներու եւ ինքնագարգացման ընթացքի մը մէջ է:



Ան ցարդ կազմակերպած է շուրջ տասնեակ մը անհատական ցուցահանդէսներ եւ մասնակցած՝ աւելի քան տասնեակ մը խմբային ցուցահանդէսներու, մեծամասնութեամբ Լիբանանի մէջ:

Յակոբ Գէորգեան առաւելաբար կը պատկերէ կին տիպարներ, որոնք թէեւ երբեմն հանդէս կու գան իրարու «սեղմուած» մէկէ աւելի թիւերով, այսուհանդերձ անոնք ներամտով եւ իրենք իրենց ներաշխարհին մէջ:

Բանաստեղծական խառնուածքի տէր այս արուեստագէտին կեր-

փիրուն՝ ներքնապէս: Անոնք մտահոգ ու խոզվայոյզ ըլլալով հանդերձ, կարծէք թէ համակեր-

պատին: Սակայն անոնց համակերպուածութիւնը չի ծնիր ստրկամտութենէ, այլ մարդասիրական լաւատեսութենէ մը կը բխի եւ կը տարածուի առհասարակ կեանքին մէջ: Յակոբ Գէորգեանի կերպարները հողեղէն ըլլալով հանդերձ, ոգեղէն էակներ կը թուին ըլլալ, որոնք կը բնակին երկնային այնպիսի ոլորտներու մէջ, ուրիշ առհասարակ կը բացակային շարն ու չարութիւնը: Ըստ երեւոյթին, կեանքի սողաւորներով եւ գոյատեւման դժուարութիւններով ու կենցաղային քաջընդունելով տաղւած, այս օժտուած գեղանկարիչը կը փորձէ կերտել իր աշխարհը, ուր կրնայ ապաստանի իրրեւ գեղեցիկին ու բարիին ձգտող զգայուն էակ:

Անոր արուեստը գերծէ անուղղակի առնչութիւններէ, սակայն գերծէ ուղղակի ազդեցութիւններէ: Կարեւորը բերեցողցման այն ընթացքն է, որ զինք կրնայ առաջնորդել դէպի վեր, եթէ երբեք ան մշակութապէս ու գեղագիտականօրէն աւելի լիցքաւորուի եւ չզգաւածանէ աշխատանքին:

Յակոբ Գէորգեանին գոյները չեն ճշար, այլ ներդաշնակ են եւ խօսուն: Կերպարները իրենց դիրքերով, կեցուածքներով ու փոխադրութեամբ շատ բան չեն «պատմեր» ակնդիրին (որ կենսական չէ), սակայն կ'ապրին իրենց յատուկ ոլորտի մը մէջ եւ մեզի զգալ կու տան «պահ, ուր կը փորձէ ինքզինքը գրեւորել իր արուեստագէտը»:

Այն քնարականութիւնը, որով պարուրուած են Յակոբ Գէորգեանի կտաւները, կու գան հեղինակին խառնուածքէն ու կը տարածուին միջոցին մէջ:

Յակոբ Գէորգեան լիբանանահայ գեղանկարչութեան յայտնի դէմքերէն է: Անոր արուեստը զուսպ է՝ առանց չոր ըլլալու, սիրուն է՝ առանց խորքային գեղեցկութեան հասած ըլլալու:

Բոլոր պարագաներուն, սակայն, Յակոբ Գէորգեանի ստեղծագործութիւնները արժանի են յատուկ ուշադրութեան, թէեւ ընկալուելու համար յատուկ մեկնարարութեան ու վերլուծութեան չեն կարոտիր:

Արեւելեան քաղաք Աճի... Մերձաւորաց յոյժ ցանկալի Երուսղեմի փափաքելի: ԵՐԵՍԵՍ ԾՆՈՐԸԱԼԻ, 12րդ դար

Հայաստանի անկախութենէն ետք Հայաստանի հողերը կեդրոններն ու առհասարակ միջնադարեան յուշարձանները «կը մեկնաբանուին» աւելի ազատ պայմաններու տակ: Այս առումով, հողերը մեկնաբանութիւններու փարբեր շունչով անոնք կը սպանան անոր արժեւորումներ: Այդպիսի յուշարձաններն է նաեւ Աճին:

Ստորեւ փորձած գրութեամբ հայրենի մտաւորական Կարէն Մարտիրոսի փարբեր պնդողով կը դիպէ եւ կ'արժեւորէ Աճին:

Եթէ տեսել էք Աճին սահմանի այս կողմից, թերեւս կը հաստատէք, որ երբեմնի մայրաքաղաքի աւերակներին նայելիս այնքան չէք տխրում, որքան տունդարձի ճանապարհին: Մի անբացատրելի թախիծ է պատում ձեզ, երբ Աճին մնում է հեռուում:

Բայց անցեալ դարի սկզբին Աճին սահմանի այն կողմում չէր, եւ ժամանակի հայ մտաւորականները նրա յաճախակի այցելուներին էին: Ահաւասիկ մի բնութագրում Աւետիք Իսահակեանից. «Երբ մարդ Աճի է մտնում, կարծես մի ուրիշ աշխարհ է ընկնում, մի կախարդական աշխարհ, բայց շատ հարազատ, շատ դարբեր, հազար տարիներով ծանօթ, մտերիմ, սրտակից: Մի քաղցր եւ տխուր զգացում համակում է թե՛ հայրենի հին տան զգայութիւնը, այստեղ են ապրել քո բոլոր հայրերն ու մայրերը, ու թե՛ նրանք բոլորը սիրել են այստեղ»:

Ես միշտ մտածել եմ, թե՛ ո՞րն է Աճիի գաղտնիքը, ինչն է նրան այդքան մօտեցրել հայի հոգուն: Ամենապարզ պատասխանը՝ Աճիի դրամատիկ ճակատագիրն է: Հայաստանի ամենազեղեցիկ ու փառաւոր քաղաքը, թագաւորանիստն ու կաթողիկոսանիստը, որի մասին ասուում էր, թէ հազար ու մէկ եկեղեցի ունէր, յանկարծ դարձել է անմարդաբնակ, լքեալ:

Այս ողբերգական իրողութիւնը բաւական էր, որ յուզառատ ու նրբազգաց հայ զուգահեռներ տեսնէր Աճիի ու Հայաստանի, Աճիի ու հայ ժողովրդի, Աճիի ու իր տոհմի ճակատագրի միջեւ: Այս ամէնին յաւելուեց 1921ին Մոսկուայում՝ Հայաստանի ու թուրքիայի միջեւ որոշուած սահմանագիծը, որը հայոց միջնադարեան մայրաքաղաքը թողեց սահմանի պռնկին՝ թուրքի ձեռքում:

Բայց Աճիի ձգողականութեան գաղտնիքին հասու լինելու համար հարկաւոր է աւելի յետ գնալ, դէպի պատմութեան խորքը:

885 թուականին վերականգնուած հայոց անկախ պետութեան առաջին չորս թագաւորները յաջորդաբար դահանիստ դարձրեցին Բագարանը, Շիրակաւանը, Կարսը: Վիճակն արմատապէս փոխուեց 961 թուականին, երբ Աշոտ Գ. Ողորմածը Կարսից փոխադրուեց Աճի, այստեղ էլ թագաւորուեց ու այն հուշակեց երկրի մշտական մայրաքաղաքը:

Աշոտ Ողորմածի նպատակը Աճին ոչ միայն թագաւորանիստ, այլեւ կաթողիկոսանիստ դարձնելն էր, եւ այդ ուղղութեամբ նա որոշ քայլեր ձեռնարկեց: Սակայն նրա ծրագիրն իրականութիւն դարձաւ աւելի ուշ՝ 992 թուականին, երբ կաթողիկոս Սարգիս Ա. Սեւանցիին կաթողիկոսական Աթոռն Արգիշայից փոխադրեց Աճի: Այսպիսով, երկրի գահահիստ կենտրոնը դարձաւ նաեւ հոգեւոր մայրաքաղաքը: Աճին ստացաւ այնպիսի դեր, ինչպիսին ունէին քրիստոնէական Հայաստանի առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատն ու Դուրինը:

Բագարատունեաց Անիում մէկը միւսի յետեւից վեր խոյացան հրաշագեղ եկեղեցիներ, որոնք եւ ճարտարապետական ձեւերով, եւ յարդարանքի տարբերով անդրադարձն էին ոսկեղարեան շրջանի հայ ճարտարապետութեան: Անգամ կատարուեցին մասնակի ընդօրինակութիւններ (Գագկաշէն Ս. Գրիգոր - Զուարթնոց, Ս. Առաքելոց - Էջմիածնի Մայր Տաճար), որոնք արուում էին Անիի՝ «Հայոց նախնեաց փառքի» քառանգորդը լինելու հանգամանքը շեշտելու համար:

Անիի գահակալները, եկեղեցեանպատ բազմազան ձեւերով մեծ տեղ էին յատկացնում քրիստոնէական գլխաւոր խորհրդանշան խաչին: Քաղաքի պարսպի վրայ պահպանուած Բագարատունեաց յովազապատկեր զինանշանը, որը նաեւ ժամանակի ողջ հայոց պետականութեան խորհրդանշանն է, պատկուած էր վերասլաց խաչապատկերով: Կարելի է ենթադրել, որ յովազն ու խաչը համապատասխանաբար խորհրդանշում են աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւնները, որոնք երկուսն էլ կենտրոնացած էին Անի մայրաքաղաքում:

Պակաս հետաքրքրական չէ խոչոր խաչի առկայութիւնը Գագիկ Ա. թագաւորի քանդակում, քանի որ միջնադարեան քանդակագործութեան եւ մանրանրկարչութեան մէջ պահպանուած ուրիշ հայ թագաւորների բազմաթիւ պատկերներում նման բան չենք տեսնում:

1001 թուականին, Քրիստոսի ծննդեան 1000ամեակին, հայոց մայրաքաղաքում աւարտուում է թագաւորաշէն երկու հսկայ եկեղեցիներ՝ Մայր տաճարի եւ Գագկաշէն Ս. Գրիգորի կառուցումը: Այդ նոյն ժամանակ Սարգիս Սեւանցիի կաթողիկոսը Անիում կառուցում է Ս. Զորիսի մեծանշան կոյսերին նուիրուած եկեղեցի եւ մեծ շուքով վաղաքապատի վկայարաններից այստեղ փոխադրում սուրբ կոյսերի մասունքների մի մասը: Այս դէպքը ցոյց է տալիս, որ կաթողիկոսն Անին ուզում էր տեսնել ոչ միայն որպէս եկեղեցական վարչական կենտրոն, այլեւ հայոց եկեղեց-



ցու նուիրական սրբութիւններն ամփոփող սրբավայր:

Հարկ է նշել, որ Անին իր վաղ շրջանի պատմութեան մէջ արդէն իսկ ունէր մի էջ՝ կապուած հայոց ազգային եկեղեցու հիմնադիր Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան հետ: Ինչպէս տեղեկացնում է Վարդան Արեւելցին, ժամանակին Գրիգոր Լուսաւորիչը մկրտել է Անիի «հին ժամանակաւ շինեաց» Ներքին բերդի յամառ իշխանին: Իսկ 13րդ դարի սկզբներին Անիի տէրը՝ Ջաքարէ ամիրապատարը, Ներքին բերդում կառուցում է մի եկեղեցի եւ շինարարական արձանագրութեան մէջ նշում, որ այն հիմնել է «Մեր սուրբ լուսաւորչի՝ Գրիգորի շինած եկեղեցու մօտ...»: Սարգիս Սեւանցու նախաձեռնութեամբ Հռիփսիմեանց կոյսերի մատուցման փոխադրութիւնն Անի գալիս է ամրապնդելու արդէն իսկ Գրիգոր Լուսաւորչի գործունէութեամբ իմաստաւորուած բնակավայրի դերը որպէս համահայկական հոգեւոր կենտրոնի ու սրբավայրի:

Այս նոյն միտումի չափազանց յատկանշական գարգացմամբ հանդիպում ենք հայոց եկեղեցու խոչորուած գործի գործիչներին մէկը՝ կաթողիկոս Ներսէս Ենորհայուց մօտ: «Որք եղեսիոյ» յայտնի ստեղծագործութեան մէջ փառաբանելով Անին՝ նա քաղաքի անուան եռատառ լինելը կապում է Սուրբ Երրորդութեան խորհրդի հետ:

Արեւելեան քաղաք Աճի... Գեղեցկացուց գարմաւալի: Որ երրակի տառի բերի յերրորդութեան խորհրդի, Որ միշտ ի քեզ երկրպագի...

Անիի հոգեւոր դերի շեշտումը միայն Բագարատունեաց դարաշրջանին չէր բնորոշ: Այն շարունակուում էր անգամ սելջուքեան տիրապետութեան ժամանակ: Մասնաւորապէս յայտնի է, որ Մանուչէի ամիրայութեան եւ Բարսեղ Ա. Անեցու աթոռակալութեան շրջանում Անի է բերուել Նունէի (Նինո, Վրաստանում քրիստոնէութեան տարածած, սրբերի շարքը դասուում կոչ) հրաշագործ խաչը: Անիում է պահուել նաեւ «Հազարափրկիչ» կոչուող նշանաւոր խաչը, որը հետագայում տարուել է Գեղարդ: Իսկ քաղաքի արուարձանները Հոռոմոսի վանքում բազմաթիւ այլ սրբութիւնների կողքին պահուել է Գետարգել Ս. Նշան գորաւոր խաչին:

Անիի կառուցողներն ու շինանշաններն այն յարդարել են որպէս քրիստոնէական միջնաբերդ, եւ պատահական չէ, որ անգամ նրա պաշտպանական շինարարութիւնների՝ պարսպների բուրգերի մէջ ներսի կողմից մատուցներ կամ խորաններ են կառուցել: Դեռեւ Աշոտ Ողորմածը պարսպները կամ մէջ եկեղեցիներ է հիմնել, իսկ Սմբատաշէն պարսպները մատուցներին բացի արտաքինից ունեն տարբեր գոյնի քարերից կամ սովորականից տարբերուող շարուածքով կազմուած խոչոր խաչեր, տասնեակ խաչքարեր եւ խորհրդանշական այլ քանդակապատկերներ: Անիում պարսպի բուրգ կառուցելը համարուում էր աստուածահանոյ գործ, որի դիմաց կառուցողը հողու փրկութիւն էր ակնկալում:

Այս ամէնը կատարուում էր քաղաքի ամրակուռ պարսպները նաեւ երկնային գործութեամբ անառիկ դարձնելու համար: Գրիգորից մէկը պատմելով Անիի պաշարումն անօգուտ համարած ու հեռացած մահմետական ասպատակողի մասին, նշում է. «Եւ դարձաւ յաշխարհ իւր, ոչ ինչ կարացել ստանալ նմա, զի Տէր պահպանէր եւ ինքն հովանի՝ Աշովն իւրով»:

Անիի բառացիորէն ողորուած էր եկեղեցիներով, որոնց բազմաթիւ վերասլաց, խաչազարդ գմբէթները ժամանակակիցների վրայ շլացուցիչ տպաւորութիւն են թողել: Եկեղեցիներ, մատուցներ եւ անգամ վանական համալիրներ կային նաեւ Անիի ձորերի քարաշէններում, ինչպէս եւ քաղաքային պարսպից դուրս գտնուող ընդարձակ արուարձաններում: Անիի կեանքում առանձնապատուկ տեղ է գրաւել Հոռոմոսի վանքը: Բաւական է նշել, որ մահից յետոյ այստեղ են հողին յանձնուել Բագարատունի թագաւորները՝ սկսած Աշոտ Ողորմածից մինչեւ Յովհաննէս Սմբատ:



տած «կին»երը քնքուչ են պած են տիրող կացուարտաբնապէս ու թեան ու մերուած՝ շրջա-

**ԱՅՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՍՅԻՆ**

**ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

RENT  
AND  
SALE

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME  
MEDICAL  
EQUIPMENT  
SERVICES**

•Over Bed Table  
•All Kinds Of Oxygen  
We Also Provide  
•Laboratory service,  
•Physiotherapist  
•Nurses Aids  
•P.T.S. (AMBULANCE)

**ՑՈՒՑԱՍԱՐԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ**  
**ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԷՏԻ ՇԵՆԸ, Բ. ՅԱՐԿ**  
**ԳԵՆԱ (02) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED...  
... OR WHERE YOU NEED.**

**Մ. Ծ.**

Իրավիճակի մասին

# ԱՆԱՉԱՌ ԹՂԹԱԿԻՑԻՆ ԱՌԱՍՊԵԼԸ

### ՃԵՔ ՉԱՖԵՐ ԱՍԵՐԻԿԵԱՆ «ՍԼԵՅԹ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ԳՐԷ, ԹԵ ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱՉՍԸ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԿԵՐՊՈՎ ՏԵՂԵԿԱԳՐԵԼԸ ԱՆԿԱՐԵԼԻ Է ՓԵՆԹԱԿՈՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Ականատեսի վկայություններ «Նիւ Եորթ Թայմզ»ի, «Պոսթըն Կրոնիկ»ի, «Մի. Պի. Սի.»ի, «Էմ. Թի. Վի.»ի եւ «Ալթայթ»ի թղթակիցներու կողմէ, որոնք աւարտած են «լրատու աղբիւր»ներու յատուկ վարժարանները՝ մարզունեղով Իրաքի վրայ յարձակումը տեղեկագրելու, մեզ պէտք է պատրաստեն ռազմածակատէն լրագրողներու դիակներով վերադարձող զինուորական փոխադրակառքեր տեսնելու: Պատերազմի անվարժ թղթակիցներ բազմաթիւ կեղծ մահեր կը դիմագրաւեն, մինչ անոնց մարդիչները անոնց վրայ կը յարձակին թունաւոր կեղծ կազմերով, ձեռնառու մըբերով եւ փամփուռներով:

«Այս վարկեանիս ականապատ դաշտէ մը անցար,- կը գուշակ զինուոր մարդիչ մը, «Սան Ֆրանսիսքո Քրոնիքըլը»ի մէկ թղթակիցին:- Մեռած մարդ ես»:

Փենթագոն աւելի քան 500 լրագրողներ, ներառեալ՝ «Ալ Ժազիրա» արաբական կայանէն խումբ մը կը մարզէ ամերիկեան բանակավայրերու մէջ՝ Իրաքի պատերազմին ընթացքին պատեղեկատուութեան առաջը առնելու համար: Մէկ շաբաթ բանակավայրերու մէջ անցընելը ենթադրաբար կ'երաշխաւորէ պատերազմի դաշտին վրայ անոնց անվտանգութիւնը: այսինքն առաջը կ'առնէ որեւէ յիմար արարքի, որ թղթակիցներն ու անոնց ընկերակցող զինուորները կրնայ մահուան առաջնորդել:

Սկզբնականներ կ'ըսեն, թէ մարզումի այս բանակավայրերը ծրագրուած են թղթակիցները հոգեբանականօրէն ընկճելու՝ նախքան առաջին հետահայ հրթիռին արձակումը: Յոյց տալով թղթակիցներու, թէ իրենք ֆիրքեպպէս ատակ չեն ռազմադաշտի կռուներուն (թէեւ շատերը ատակ են) եւ թէ՛ պատերազմը զիրենք կրնայ մահուան առաջնորդել հազար աննախատեսելի ձեւերով (այս մէկը ճիշդ է), զինուորական մարզանքները կը միտին նման վտանգներու նկատմամբ անտարբեր մօտեցում ցուցաբերող թղթակիցները վերածել հլու եւ կրաւորական խամաճիկներու: Սկզբնականներ կը մտածեն, թէ երբ զինուորական մարզումներու հետեւած թղթակիցները իրենք զիրենք պիտի գտնեն պատերազմի թատրոնին մէջ, նոյնիսկ ամէնէն անկախ դիտանկիւնով թղթակիցները պիտի ապաւինին իրենց համակրած յիսնապետին պաշտպանութեան եւ հայրենասիրական ուժեղ կոչումները պիտի ուղարկեն իրենց երկիրը:

Զինուորական նման դաւադրութեան մը կարիքը չկայ: Դժուար է երեւակայից արդուէսի որքի մը մէջ թաքցնուած ոեւէ անաչառ եւ չէզոք թղթակից, մանաւանդ՝ երբ տաք մետաղի գունդ մը ներս կը խուժէ: Պատմականօրէն թղթակիցները ինքնաբերաբար կարեկցած են զինուորական այն կողմին, որ զիրենք կը հասցնէ մինչեւ ռազմածակատ եւ աւելորդ կը դարձնէ որեւէ տարակարծութիւն: Իրաքի պատերազմը տարբեր պիտի չըլլայ:

Անշուշտ հերետիկոսութիւն պիտի ըլլար ըսել, թէ պատերազմի թղթակիցները չեն կիրարկել լրագրութեան անկողմնակալ ուղղութիւնը քաղաքականութեան, առեւտուրի, մշակոյթի, կրօնի, գիտութեան եւ այլ մարզերու մէջ: Սակայն թղթակիցները որդի ի բոնին չեն կիրարկել արձագանակահոսանքի պատմական աստիճանը, այլ զայն կ'ընդունին այնպէս, ինչպէս կրօնաւոր մը կ'որդեգրէ լուսութիւնը: Անոնք կը մտածեն. «կողմնակալ մի՛ ըլլար», «չէզոք մնա՛», «ազատ մտածէ՛», «հակաընդուն բանեցուր կողմնակալութեանդ վրայ», «դուն չես պատմութեան նիւթը, այլ պարզապէս զայն տեղեկացնողն ես»:

Սակայն պատերազմի մասին տեղեկագրելը յայտնապէս մեծ բացառութիւն մըն է առարկայականութեան պաշտամունքին մէջ, գէթ որովհետեւ լրագրող մը, որ ինքզինքը զգացականօրէն կ'անջատէ զինուորական բախումի մը արդիւնքէն, ինքնին մահը կը հրաւիրէ:

«Թղթակիցներու համար դժուար է շեղիլ անդադար իրենց համար թմրակահարուած քարոզչութեանը,- կ'ըսէ Մայամի Հերբլտ» թերթի թղթակից կիլն կարվին, որ աւելի քան տասը տարի տեղեկագրած է կեդրոնական Ամերիկայի հարցերուն մասին՝ յաճախ քննարկներով հետ շրջելով:- Սակայն ինծի համար անհասկնալի պիտի ըլլար, եթէ ոեւէ մէկը կռիւի կացութեան մէջ չկարեկցէր այն զինուորներուն, որոնք կ'ուղեկցէին իրեն: Որքան մօտենաս պատերազմին, նուազ գործնական է հաստատարակչուած պատմութիւն մը գրելը: Ամերիկեան ծովուծի եզրապահներու հետ շրջելով՝ չես կրնար լսել իրաքցի զինուորներու կարծիքը: Ասիակ կատարեալ լրագրութիւն չէ»:

«Նիւ Եորթըր» թերթին թղթակից ձեֆորի Կոլտպըր կը իշէ «գերակշռող ընթացքները եւ միասնականութիւնը», զոր զգացած է ագետի զինուորներու նկատմամբ, երբ անոնք եւ ինք յարձակումի ենթարկուած են հայ զինուորներու կողմէ: Այդ պահուն Կոլտպըրին համար կարեւոր չէր, թէ «պարիսները չարտեր» էին պատերազմին մէջ: ԱՄԷԿ քեզ գործս կը հանէ անել կացութեան, եւ դուն երախտապարտ կը զգաս,- կ'ըսէ Կոլտպըրը- Հարցուցէ ոեւէ մէկուն, որուն վրայ կրակ բացուած է»:

Կոլտպըրի անախորժ հարցերը կը նախատեսէ բազմաթիւ թերթներու համար, որոնք պատերազմի փորձառու թղթակիցներու փոխառէն՝ նորերու կնէր կ'ուղարկեն Իրաք: «Անոնք երբեք չեն տեսած սպանութեան տեսարաններ կամ մեծ պայթումի մը անմիջապէս յաջորդող վայրկեանները,- կ'ըսէ Կոլտպըրը: Անոնք չեն հասկնար այն զգացումները, զորս պիտի գգան, մանաւանդ՝ երբ իրենց ուղեկցող զինուորներն իրենց մարմինները կը բեկտուեն»:

Անկախ այն ենթակայական գերակշռող զգացումէն, որ կը յառաջանայ, երբ թղթակից մը առաջին անգամ ըլլալով զինուորի մը մարմնին միասնոր կը սրբէ իր գիրկի համակարգիչն, Փենթագոնի մէջ ճիգ պիտի թափէ, որ իր հովանին վայելող թղթակիցները առարկայական մօտեցումով տեղեկութիւններ չուղարկեն իրենց երկիրը: Փենթագոնի օրէնքները կ'արգելն թղթակիցներուն տեղեկութիւններ փոխանցել կենդանի եւ շարունակուող բախումներու վերաբերեալ, առանց հրամանատար զինուորականի մը թույլատուութեան: Ապագայ կամ ջնջուած զինուորական առաքելութիւններու վերաբերող տեղեկագրութիւնները եւ սարգիլուած են, եւ թղթակիցներ իրաւունք ունին միայն ընդհանրութիւններ գործածելու, երբ կը տեղեկագրեն զինուորական որեւէ գործողութեան տեղին ու ժամանակին եւ յարակից այլ բաներու մասին:

Իրաքի պատերազմը տեղեկագրելու համար դուռնած օրէնքները նորութիւն չեն: Զօ կալու ուէյ, որ Վիետնամի պատերազմին հռչակաւոր թղթակիցներէն է եւ զայն տեղեկագրած է «Նու. Փի. Այ.»ի համար, զանոնք դրականօրէն կը բաղդատէ 4 տասնամեակ առաջ մէջ ընդհանրի մէջ պատերազմի թղթակիցներու համար սահմանուած օրէնքներուն (յատկանշական միակ տարբերութիւնը այն է, որ Վիետնամի մէջ թղթակիցները կրնային ոեւէ անձի դիմել, որ իրենց տեղ մը տանէր, իսկ Իրաքի մէջ անոնք ենթակայ են յատուկ ջոկատներու, եւ անոնց արգիլուած է անցնել մէկ ջոկատէն միւսը):

Հետեւաբար յատուկ ջոկատներու ընկերակցելով՝ մարզումներու ենթարկուած լրագրողները պիտի կարենան ըսել, թէ ո՛վ աւելի յառաջխաղացք կ'արձանագրէ, ո՛վ կը նահանջէ, ո՛վ ռմբակոծումի թիրախ է: լաւագոյն պարագային՝ ալտու ճշմարտութիւններ: Ոչ մէկ՛ տարտամարտի վերաբերեալ ամբողջական տեղեկութիւն կարելի պիտի ըլլայ: ունենալ միջնջեւ պատերազմին աւարտը եւ անկէ բաւական ետք, երբ թղթակիցներ պիտի կարենան հակամարտ երկու կողմերուն զինուորներուն հետ հարցազրոյցներ կատարել: Փենթագոն, ինչպէս միշտ, ապահովական պատճառաբանութիւններով ամէն ճիգ պիտի թափէ իր հակակռիւս տակ պահելու համար պատերազմին ամբողջական պատմութիւնը:

Ինչո՞ւ կը կարծենք, թէ այլ բան պէտք է սպասենք: Յարդ ոչ մէկ պետութիւն ընդունած է այն գաղափարը, թէ մամուլը պէտք է անկաշկանդ հասողութիւն ունենայ որեւէ ռազմածակաբանի: Նոյնիսկ այն ձեւակալութիւններ, թէ պատերազմի թղթակիցները պէտք է առարկայական մօտեցում ցուցաբերեն, համեմատաբար նոր գարգացած է: Մինչեւ 20րդ դար պատերազմի փորձառու թղթակիցներու փոխառէն՝ նորերու կնէր կ'ուղարկեն Իրաք: «Անոնք երբեք չեն տեսած սպանութեան տեսարաններ կամ մեծ պայթումի մը անմիջապէս յաջորդող վայրկեանները,- կ'ըսէ Կոլտպըրը: Անոնք չեն հասկնար այն զգացումները, զորս պիտի գգան, մանաւանդ՝ երբ իրենց ուղեկցող զինուորներն իրենց մարմինները կը բեկտուեն»:

տերազմի մասին գրողներ կը հազնէին այն բանակին տարազը, որուն մասին կը գրէին եւ գէնք կը կրէին թշնամիին դէմ: Անոնց տեղեկագիրները բացայայտօրէն (եւ անկեղծօրէն) ուղղուած էին այն փողովուրդին, որուն բանակին կը զօրակցէին: Սպանիոյ եւ Ամերիկայի միջեւ պատերազմը տեղեկագրած թղթակից Սթիֆըն Քրէյն յարձակողապաշտ մղուածով մը առելէ նետուած էր Փուերթօ Ռիբոյի մէկ գիւղին անձնատուութիւնը ընդունելու համար այն բանակին կողմէ, որուն կ'ընկերակցէր, ինչպէս կը գրէ Յիլիսի Նայթլի, պատերազմի տեղեկատուութեան պատմութեան վերաբերող իր «Տը Ֆըրսք քեծուրթի» գիրքին մէջ:

Անոնց լրագրողներ «պաշտպանուած խաւի» մը դիրքը սկսան վայելել միայն Բ. Աշխարհամարտէն ետք, երբ ժընեւի Ուխտը ի վերջոյ արգիլեց զինուորներուն զանոնք թիրախ դարձնել կամ ձերբակալել (լրագրողները մաս կը կազմեն պատերազմի մէջ դեր չունենող կիւնեւ, ծերերու եւ մանուկներու հատուածին): Այս ուխտէն առաջ զինուորները կը սպաննէին քաղաքային լրագրողներ կամ զանոնք իրրեւ պատերազմի գերի կը պահէին, եւ այդ զինուորները պատերազմէն ետք հարուարդէյօրէն պատիժի կ'ենթարկուէին:

Բ. Աշխարհամարտին ամերիկեան մամուլը ուրախութեամբ կ'ենթարկուէր տեղական զարքնութեան: Ոմբարկներ յաճախ կը կեղծէին որեւէ բան, որ կրնար վնաս հասցնել պատերազմի ոգիին կամ Միացեալ Նահանգներու բարոյական կողովին, ինչպէս՝ պատերազմի սրտածմիկ նկարագրութիւններ կամ լուսանկարները: Մայքըլ Սուինին «Սիքքըք Գիքքըք» գիրքին համաձայն, ոչ մէկ լրագրող դիտումնաւոր կերպով խախտած է զարքնութեան օրէնքները, եւ միայն մէկ ձայնասփիւռի խօսնակ Լաս Վեկասի մէջ յանդիւստէ է դժգոհութիւն յատնել պետական զարքնութեան նկատմամբ:

Եթէ պատերազմը առարկայականութիւնը անկարելի կը դարձնէ, ինչո՞ւ այնքան կը խօսինք անոր մասին: Անանաբար, որովհետեւ լրագրողներ կը կարծեն, թէ առարկայականութեան առաջաւոր պիտի երաշխաւորէ իրենց ապահովութիւնը, նոյնիսկ, երբ իրենք կողմ ճշգրտած են:

Օրինակ, նկատի ունեցէք «Ուոլ Սթրիթ Ճըռնըլ»ի թղթակից Տանիէլ Փըրլի սպանութիւնը: Երբ դաշնակից ռեժիմ տապալեցին Մոլլա Օմարի իշխանութիւնը, «Ուոլ Սթրիթ Ճըռնըլ»ի թղթակից Ալան Քուլիսըն Քապուլին մէջ գնաց գիրկի փոքր համակարգիչ մը, որուն վրայ գտաւ «Քայտա»ի անդամներու միջեւ հաղորդակցութիւններ եւ ահաբեկչական ծրագիրներ: Համակարգիչին մէջ իր գտած 1750 թղթածարաններուն մէջ կային տեղեկութիւններ «Քայտա»ի հրահանգի մը կապուած շարժումներուն վերաբերեալ, որոնց ճամբան կը համապատասխանէր Ռիչըրտ Ռայտի ծրագիրներուն: Ռայտի Ամերիկեան օդանաւային գիծերու թիւ 63 թռիչքին մէջ ձեռնարկուած այն անձն էր, որ իր կողմին մէջ պայթուցիկ նիւթեր կը կրէր: Համակարգիչը կը պարունակէր տեղեկութիւններ, որոնք կրնային օգնել

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ 21ԲԴ ԴՐՈՒՄ

## ՊԻ. ՊԻ. ՍԻ.Ի ԹՂԹԱԿԻՑ ՆԻՔ ՐԱՅԱԲ ԲԱՂԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԿԱՍԱՐԷ 1991ԻՆ ԵՈՅԻ ՊԱՏԵՐԱՉՍԻՆ ԵՒ ԻՐԱՔԻ ԿՐԱՉ ԱՅԺՄՈՒ ՅԱՐՉԱԿՈՒՄԻՆ ԼՐԱՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ՝ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՎ, ՈՐ ԱՆԻԿԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԷՆ ԱՒԵԼԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄԸ ՊԱՏԵՐԱՉՍԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Ո՛վ այժմ կը լիշէ Արթըր Քենթըր կամ «Սքոու Սքու»ը: Քենթ Սէնուտական Արարիոյ մէջ ամերիկեան պատկերասփիւռի ծիծաղելի կերպով վայելելի թղթակիցն էր, որ Ծցիք պատերազմին ամերիկահեռահարի սիրտը կը գրաւէր: Ան իր պատերազմը կը մղէր արբանեակային ալեւաւաքներու եւ պատկերասփիւռի նկարահանումի գործիքներով, պանդուխտ մը տնիքը կեցած, իրաքեան «Սքու» Տղթուներու տեւական սպանաւիթքին տակ: Քենթ Հուսկաւոր դարձաւ, որովհետեւ Ծցիքի պատերազմը առաջինն էր, որ մղուեցաւ 24 ժամ պատկերասփուռով լուրերու դարուն:

Նոյնիսկ, երբ բան չկար ըսելիք, նոյնիսկ, երբ ոչինչ գիտէին, Միջին Արեւելքի տարածքին այնքան սուղ վճարուած թղթակիցները միշտ ներկայ էին պատկերասփիւռի պատատրին վրայ՝ հեղինակաւոր կամ վախցած երեւոյթով:

Երբեմն, ինչպէս՝ քիմիական գէնքերու հաւանական գործածութեան վտանգին պարտաւոր, «Սի. Էն. Էն.»ի երուսաղէմի գրասենեակին պաշտօնեաները ստիպուած իրենց կապի դիմակներով կը պատկերասփուռէին, եւ անոնց դէմքը կը ստանար ահաբեկուած երեւոյթով:

Պատերազմին առաջին հանգրուանին կռիւը ամբողջութեամբ օդին մէջ էր՝ ուժբաժիկ օդանաւերով եւ հեռահաս հրթիռներով: Դաշնակիցներու կեդրոնները կը հրապարակէին վիտէոյի խաղերու նման պատկերներ, որոնք

ամերիկեան բանակին կամ գաղտնի սպասարկութեան, հակահարձակական իր պաշարին մէջ: 31 Դեկտեմբեր 2001ին վերոյիշեալ թերթը հրատարակեց համակարգիչին մէջ պահուած կարգ մը տեղեկութիւններ: Անոնց հրատարակուեցնէն առաջ թերթը համակարգիչին բովանդակութեան մասին տեղեկ պահած էր Միացեալ Նահանգներու բանակը:

«Մտածեցինք, թէ ասիակ ճիշդ ձեւն էր բարոյական թղթակատուութեան առումով, ըսած է «Ուոլ Սթրիթ Ճըռնըլ»ի խմբագիր Փօլ Ի. Սթայլըրը, 21 Յունուար 2002ին, «Տը Նիւ Եորթ Թայմզ» թերթին հետ հարցազրոյցի մը առիթով:- Բարոյական առումով պիտի խորտակուէինք, եթէ գաղտնի պահէինք մեր տեղեկութիւնները, որոնք պիտի փրկէին կեանք մեր զինուորներուն եւ քաղաքացիներուն: Տեղեկատուութեան առումով՝ կ'ուզէինք ստուգել մեզի հասած տեղեկութիւնը»:

«Առեւանգիչներ 23 Յունուար 2002ին յանկարծ բռնեցին Փըրլը, որ կը հետազօտէր կապ վերաբերուող զինեալներու եւ Ռայտի հետ, եւ որուն մասին տեղեկութիւններ կապի համակարգիչին մէջ: Առեւանգողները չէզոք, անաչառ կամ ոչ կռուող մը չէին համար Փըրլը: Փրկագինի պահանջ մը ներկայացրնող երկտողի մը մէջ անոնք կը գրէին, թէ Փըրլ «Սի. Այ. Էյ.»ի գործակալ էր: Ամբաստանութիւնը ընդլայնեցուցիչ էր, սակայն բարոյական անհեթեթ էր: Նոյնիսկ նախագահ Քլարթըրի օրերուն «Սի. Այ. Էյ.» ամերիկացի լրագրողներու կը դիմէր, որպէսզի գործակալութեան համար պատուէրներ կատարէին:

«Ասիակ չի նշանակեր, թէ կը քննադատենք Սթայլըրը իր թերթին կողմէ գտնուած տեղեկութիւնները զինուորականութեան հետ բաժնելուն համար: Եթէ ես ալ նոյն վիճակին մէջ գտնուէի, նոյնը պիտի ընէի: Սակայն պիտի չակնկալէի մէկ կողմէ որդի ի բռնի օգնել Միացեալ Նահանգներու պետութեամբ՝ պատերազմի ընթացքին մէջ, միւս կողմէ՝ պաշտօնեաներս գերծ պահել վտանգէ:

«Տանիէլ Փըրլի նեպ սպանութիւնը կը վերապատմեմ պարզապէս լրագրողներու, խմբագիրներու եւ ընթերցողներու յիշեցնելու, թէ պատերազմը աւելի ժյատ է ոչ կռուողները պատրուելու մէջ, իսկ լրագրական անաչառութիւնը տեսականօրէն թէ գործնականօրէն անպայմանօրէն ապահովել մը մը չ'ընձեռներ: կրնաք ըսել, ինչ որ կ'ուզէք այն վայրագ մարդօք մասին, որոնք սպաննեցին Փըրլը, սակայն անոնք մամուլը բազմաթիւ ներկայացուցիչներէ աւելի յստակ պատկերացում մը ունին, թէ ամերիկեան մամուլը որո՞ւն կողմն է: Անոնք փրկագինի պահանջի մը կցուած երկտողի մը մէջ գրած են:

«Փաքիստանի մէջ շախտող բոլոր ամերիկացի լրագրողները կը գզուչացնենք, թէ իրենց շարքերուն մէջ շատեր լրտեսութիւն կ'ընեն իրրեւ լրագրող ծալուած: Հետեւաբար ամերիկացի բոլոր լրագրողներուն 3 օր պայմանաւորում կու տանք հեռահասու Փաքիստանէն: Անկէ ետք ո՛վ որ շարունակէ մնալ, թիրախ պիտի դառնայ»:

ցոյց կու տային զինուորական կազմածները քանդող «խելացի ռումբեր»:

Ոչ ոք գիտէր, թէ օդային յարձակումները ի՛նչ ազդեցութիւն կը գործէին Իրաքի մէջ, որովհետեւ արեւմուտքի բոլոր լրագրողները հեռացած էին երկրէն: Բացառութիւն էին 3 հոգիէ բաղկացած «Սի. Էն. Էն.»ի անձնակազմը եւ սպանական «Էլ Մուսուս» օրաթերթին մէկ թղթակիցը, որուն մասին քիչեր գիտէին, որովհետեւ «Սի. Էն. Էն.»ի թղթակից Փիթըր Աունէթ թոյլ չէր տար, որ սպանեցին արբանեակներու կապուած իր հեռաձայնը գործածէր:

Աունէթ կարգ մը շրջանակներու կողմէ ամբաստանուած է թշնամի երկրին մէջ մնալով, ինչ որ իրրեւ հայրենասիրութեան բացակայութեամբ թարգմանուած է, մանաւանդ որ այն ստուգած է, թէ դաշնակիցներուն կողմէ իրրեւ քիմիական գէնքերու գործարան դմբակոծուած վայր մը իրականութեան մէջ մանուկներու յատուկ կաթի կ'արտադրէր:

Ծցիքի առաջին պատերազմը նախկին որեւէ պատերազմէ աւելի լայնօրէն տեղեկագրուած է: Սակայն արեւմտեան սակաւթիւ գործակալութիւնները ցոյց տուած են 1991ին Իրաքի մէջ արձանագրուած կրուատներուն տարողութիւնը: Յատուկ էր, որ անոնք որոշ առումով ձախողած էին: Անոնք պատերազմի վաշտէն շատ հեռու էին:

Իրաքեան զինուորական կորուստին հակայակ կատարողութիւնը մեծ մասամբ աննկատ

անցաւ: Հրատայներու եւ թռչող ռումբերու բազմաթիւ նկարները հրապարակուեցան, սակայն շատ քիչ բան տեղեկագրուեցաւ մեռելներու եւ մեռնողներու արևմտ զանգուածներուն մասին:

Ալ Ամարիայի լուսանկարներէն զատ, ուր շուրջ 300 հոգի սպանուեցաւ, երբ դաշնակիցներու օդանաւ մը հարուածեց իրաքեան զինուորական թաքստոց մը, ինչպէս յայտարարեցին այդ ժամանակ, պատերազմը առանց արևելի պատկերուեցաւ եւ յայտնապէս նուազ վրդովում պատճառեց հանրային կարծիքին:

Սակայն հանրային կարծիքը փոխուեցաւ, երբ տեսանք հիւսիսային Քուէյթի ղէպի Պարսա ուղղուող իրաքեան զինու

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՌԻԹԻՒՆԸ...

Շարունակուած՝ 7րդ էջէն

## ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ, ԹԵ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս միշտ, թղթակիցներ եւ խմբագիրներ պարտաւոր էին դիմագրաւել իրականութիւնը երեւակայութեանէն, ճշմարտութիւնը սուտէն եւ քարոզչութիւնը անկեղծ խօսքերէն զանազանելու դժուարութիւնները:

Որքա՞ն կարելի է հաւատք ընծայել Պաղտատի, Ուաշինգթոնի կամ Լոտոնոնի: Լրագրական սկեպտիկութիւնը որքանո՞վ արդարանալի է, երբ հայրենակիցներ իրենց կեանքը վտանգի տակ կը դնեն կռուելով:

Այս անգամ մղուող պատերազմին լրատու գործակալութիւններ պարտաւոր են դիմագրաւել նոր մարտահրաւէրներ, ինչպէս՝ քիմիական եւ կենսաբանական զէնքերով յարձակումներ, որոնք շատ աւելի վտանգաւոր են, քան՝ 1991ի պատերազմին մարտահրաւէրները:

Նման սպառնալիքներու նկատմամբ լուրը մօտեցում կը ցուցաբերէ մանաւանդ զինուորականութիւնը, որ բրիտանացի պատերազմի թղթակիցները հրաւիրած է հետեւելու պաշտպանութեան նախարարութեան կողմէ վաւերացուած յատուկ դասընթացներու:

«Պի. Պի. Սի.»-ի նման լրատու կարգ մը գործակալութիւններ իրենց պաշտօնէութիւնը ուղարկած են յաւերժապետ դասընթացներու, իսկ ֆենթազիայի թղթակիցները պատուաստած է ծաղկախոտի եւ անթրաքսի դէմ:

Իմ քաղաքներն նաեւ հարց կու տան, թէ որքանո՞վ ապահով է Պաղտատի մէջ պաշտօնէութիւն պահելը:

Իրաքիցի կ'ըսեն, թէ լրագրողներ պէտք է գործեն տեղեկատուութեան նախարարութեան կառոյցներուն մէջ, սակայն բրիտանացիք եւ ամերիկացիք կ'ըսեն, թէ իրաքեան պետական բոլոր կառոյցները հաւանական թիրախներ են դաշնակիցներու ուժերու դիմումներուն:

Թէեւ իրաքիցի կրնան արեւմուտքի լրագրողները օգտագործել իրենց մարդկային վահաններ, սակայն Պաղտատէն հեռացումը անկարելի կը դարձնէ որեւէ ուժեղացումի մասին տեղեկագրելը կամ դաշնակիցներու յայտարարութիւններուն ճշմարտութիւնը հաստատելը:

Այս կայ նաեւ հարցը դաշնակից ուժերու չարորդ միջնորդային թղթակիցներուն, որոնք «միակողմանի» որակուած էին Մոցի առաջին պատերազմին, եւ զորս վերջերս «ազատ արմատականներ» կոչած է խմբագիր մը:

Երբ իրաքեան զինուորական դիմագրողութիւնը փուլ գալ, «ազատ արմատականները» ցայտուն կերպով պիտի տեղեկագրեն պատերազմին անդադարձները:

## ՈՒՍՏԱՆԱԿԱՅԻՆ ՎՐԱՅ

Տարածայնութիւններ կան, թէ դաշնակիցներու կողմէ չարտօնուած արբանեակային հեռաձայններ կամ ալեհաւաքներ օգտագործող ոեւէ թղթակից կրնայ յարձակումի ենթարկուիլ:

Կ'ըսուի, թէ դաշնակիցներու օդանաւերը չեն կրնար զանազանել պատկերասփիւռի կապուած արբանեակային ալեհաւաք մը՝ հակադային հրթիռներու ռատարներէն:

Փենթագոնն ու Բրիտանիոյ պաշտպանութեան նախարարութիւնը կը ժխտեն, թէ հրապարակած են յատուկ ազդարարագիրներ այս առնչութեամբ: Սակայն յստակ է, թէ անոնք չեն ուզեր, որ թղթակիցներ անոնց իրենց հակողութեան թափառին ռազմադաշտին վրայ:

Սակայն նկատի ունենալով լրատու գործակալութիւններու կողմէ օգտագործուած արհեստագիտական նորարարութիւնները, այս մէկը կանխարգելիչը դժուար կը թուի ըլլալ:

Լրատու գործակալութիւններ 1991ին արդէն ունէին արբանեակային շարժական ալեհաւաքներ, արբանեակային հեռաձայններ, վիտեոյի թեթեւ գործիքներ եւ «Սի. Էն. Էն.»-ի ու «Մքայ Նիուզ»-ի նման 24 ժամ լուր հաղորդող պատկերասփիւռի կայաններ:

Վերջին տարւոյն տարիներուն պատկերասփիւռի լրատու կայանները թիւը բազմապատկուած է, արհեստագիտական գործիքները աւելի փոքրացած եւ թեթեւացած են, թուական (տիքիթը) լուսանկարչական գործիքները, գիրկի համակարգիչները եւ վիտեոյի միջոցով խմբագրուած առիթ կու տան, որ թղթակիցներ աւելի դիւրին շարժին:

Սակայն միայն վիտեոֆոնը, որ կրնայ առանց արբանեակային ալեհաւաքի քիչ մը աղօտ տեսարաններ ուղարկել ռազմաճակատէն, խմբագիրներու եւ ակընդիրներու կը խոստանայ այնպիսի լրատուութիւն մը, որ գոյութիւն չունի Մոցի առաջին պատերազմին:

Արդեօք խմբագիրներ պիտի օգտուին անոր ընծանա՞ծ առիթներէն՝ պատերազմի կենդանի տեսարաններ պատկերասփուելու համար մեր պատասաններուն վրայ:

Կը կասկածիմ, որովհետեւ մեռնող կամ սարսափելի վէճեր ստացած մարդոց վիճակը ցոյց տուող տեսարաններ առանց խմբագրումի եւ առանց միջամտութեան պատկերասփուելը չափազանցութիւն պիտի ըլլայ:

Պատերազմի գործողութիւններուն հետ պիտի յայտնուին 2003ի «Սքուտ Սքուտ»-երուն անմեղ դէմքերը: Միայն մէկ բան յստակ է. առկա պատմութեան մէջ ամէնէն աւելի տեղեկագրուած պատերազմը պիտի ըլլայ:

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Օրը նպաստաւոր է որեւէ աշխատանքի: Եթէ հետազոտական աշխատանք կը տանիք, այսօր ի պատիւ է ձեր գործունէութիւնը: Պիտի գնահատուիք ձեր տնօրէնէն:

☆ **ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Ամսուան վախճանից հետ պիտի ունենաք դրամական տագնապ: Կարելի չէ ըսել, թէ տնտեսութեան թագաւորն էք: Ուրեմն խնայել գիտցէք: Շուտ մի ըլլաք:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Մի փորձք ձեր գաղափարները պարտադրել ուրիշ մը, որ ձեր միտքերուն հակառակ է: Արդէն կորսնցնելիք ժամանակ ալ չունիք: Հեռացէք այդ պիտիներէ:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Ոմանք պատճառ կը փնտռեն ձեզ մէկ կողմ դնելու ձեր աշխատանքէն, որուն պէտք է ընդդիմանաք: Փնտռեցէք պատճառը, թէ՛ ինչո՞ւ...:

☆ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Լաւ ժամեր ձեզ կը սպասեն, եթէ մարգակն վարժութիւններու հետեւիք: Հոն պիտի ծանօթանաք նոր դէմքերու, որոնց հետ շեք մը կապիք պիտի հաստատէք:

☆ **ԿՆՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Աշխատանք մը ստանձնած էք, որուն վերջը յայտնի չէ. երբ պիտի կարենաք աւարտել, չէք գիտեր: Այսուհանդերձ ձեր ջանքերը մի՛ թուլցնէք: Համբերեցէք:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Կապ պահեցէք ձեր ազգականներուն, մանաւանդ ձեր գարմիկներուն հետ, քանի որ երկար ատեն է ի վեր գիրքը չէք տեսած ու այս բոլոր յարաբերութիւնը մի՛ երկարած գէք:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Մեկ օրն իսկ բարար է ձեզի՝ պարպելու համար ձեր բակը: Արդեօք պէ՞տք էր այսքան գնում կատարէիք այսօր, քիչ մըն ալ անպէտք բանք գնելու...:

☆ **ԱՆԵՂՆԱԻՌ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Այսօր ընկերային ձեր կեանքը պիտի ըլլայ հանելի եւ օգտակար: Առիթը պիտի ունենաք սորվելու, թէ ինչպէս մարդ կը յարգեն, անոր արժանիքները կը յայտնեն հրապարակաւ: Շատ պիտի օգտուիք այս դասէն:

☆ **ԱՅԾԵՂԶԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Բնաւ տրամադրութիւն չունիք հանդուրժելու չափազանցուած, խոշորացուած խնդիրներու, որոնք կրնան պատահիլ այս օրուան ընթացքին: Հեռու կեցէք շատախօս անձերէ:

☆ **ՄՈՂԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Կարեւոր հարց մը յանկարծակի լուծուի՞ պիտի գտնէ, ինչ որ բնաւ չէիք յուսար: Կեանքը անակընկալներով լեցուն է. յուսահատելու չէ: Նոր ծագող արեւը իրեն հետ նորութիւններ կը բերէ:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Ձեր աշխատած վայրին մէջ անձ մը կը կասկածի ձեզմէ, թէ իր պաշտօնը պիտի լլլէք, ինչ որ ճշմարիտ չէ: Զեջեցէք այս կարծիքը՝ նախքան մթնոլորտին լարուիլը: Ապահովուցէք այդ անձը, թէ դուք իրեն չէք նախանձիր:

## ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 5397 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՐԱՅԵԱՏ
1. Ընկույզի միջուկին քառորդը - Մայիտ Աբելի երկերէն:	1. Հիւսելի տերեւներով բոյս - Ինչպէս - Ահաւասիկ:
2. Փտուկիւն - Կին հետապնդող:	2. Մերենցի երկերէն՝ «...»
3. Նիզակ - Մարդաբընակ:	3. Դարուն - Թաղիք:
4. Շողկապ - Տեղեակ:	3. Դաւանան - Սերմնափակ:
5. Սթափ վիճակ - Ածականակերտ մասնիկ - Սաստիկ տաք:	4. Կրկնուած բաղաձայններ - Կազմիչ մասնիկ (հակ.):
6. Կրկնուած բաղաձայններ - Կնքահայր - Յուցական անակախ:	5. Հինուոն կրակի աստուածը - Յապաուած՝ արբանակի պետութիւն - Ձայնանիչ:
7. Գինիի ոգի - Բորբոքուն պալար:	6. Ազնիւ խունկ - Նոյն գիրքը:
8. Կռունկ - Փոքրացնող մասնիկ - Այր:	7. Փրկելիկան աստուած:
9. Մանր որդ - Պատմիչ Ստեփանոս Տարօնցի:	8. Անուրջ - Մարդամիթագաւորներէն:
10. Նախահայկական պետութիւն - Եգիպտական լրատու գործակալութիւն:	9. Ազնուական ձիաւոր - Ուղղեակ:
11. Յաւելուած - Պարոն - Գոյուկիւն ունին:	10. Թրքահայ երկլեզու շարքաթաթերթ - Բուսական գունաւորող նիւթ:
	11. Թուշ - Թաղին ազգային գործերը վարող:

**ԹԻՒ 5396**

1	Մ	Ր	Գ	Ր	Է	Ս	Մ
2	Օ	Ր	Ե	Ք	Լ	Ե	Պ
3	Տ	Ի	Գ	Ս	Ե	Ք	Ք
4	Ա	Ս	Գ	Ր	Է	Ս	Ս
5	Ր	Ր	Ց	Ն	Ս	Ս	Ո
6	Ո	Կ	Ի	Կ	Ս	Ս	Ս
7	Ո	Կ	Ի	Կ	Ս	Ս	Ս
8	Ի	Ե	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Մ	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Վ	Ա	Ս	Ս	Կ	Ի	Գ

**ԽԱՉԲԱՆԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

## ԻՐԱՔԻ ԲՈՅՐՆ ՈՒ ԹՈՅՐԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Յուցարկութեան դրուած գեղանկարներն օրինակ մը

Մինչեւ 26 Մարտ «Այ Մատինա» թատերասրահին մէջ տեղի ունեցող իրաքեան մշակութային շարժումն ծիրան ներս կը ցուցադրուի լիբանանցի արուեստագէտ ժեմիլ Մալախի գործերուն մէջ հաւաքածու, որ կ'ընդգրկի կուրաշով աշխատանքն ու տասնհինգ գեղանկարներ: Յուցահանդէսը կը կրէ «Մուշէհէտէթ մըն իրաք» խորագիրը:

Մալախի շրջագայութեան վերջին կանգաւոր եղած է Իրաքը: Երկու տարի առաջ դէպի Պաղտատ ու իրաքեան այլ քաղաքներ ու գիւղեր շրջագայութեան ընթացքին արուեստագէտը երբեք անտես չէր իրաքեան բնութեանն ու կենցաղին տեսարանները:

Սակայն, հակառակ երկրին մէջ տիրող ներկայ կացութեան, ժեմիլ Մալախի պատկերած Իրաքը պէրժ է պատերազմին արհաւիրքէն եւ հեռու է անոր պատճառած քառասյին մթնոլորտէն: Արուեստագէտին պատկերած Իրաքն ու իրաքցի կը ներկայանան իսլաւոյ դիմագիծով եւ չեն սահմանափակուիր տուեալ ժամանակահատիկին:

**ՕՐԵՆՈՒՅԹ**

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ՄԱՐՏ 2003

**ՊԵՅՐՈՒՅԹ**  
ԱՆՉՐԵՒՈՏ

**ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ**  
ՑԵՐԵԿ՝ 15°C

**ԳԻՇԵՐ՝ 12°C**

**ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 75%**

**ԱԶԳԱԿ** 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 24 Մարտ. 1953

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԵՍ Ի ՊԱՏԻՒ Տ. ԹԻՔԵԱՆԻ «ԵԹԵ ԱՄԲՈՂԿ ԿԻԼԿԻԱՆ ԱՊՍԱՍԲԱՍ ԸԼԼԱՐ, ԱՅՊ ԵՐԿԻՐԸ ԸՍԱ ՄԵՐԸ ԵՂԱԾ Կ'ԸԼԼԱՐ»

Մարտի մէջ, ամսոյն ծիւց, ի պատիւ Տ. Թեքեանի կատարուած է մեծարանգի հանդիսութիւն մը՝ ի ներկայութեան ընտիր բազմութեան մը: Նախագահած է ընկեր Վ. Միսիրը, որ ներկայացուցած է Տ. Թեքեանի արժանիքներն ու կատարած յոբերակները: Տ. Թեքեան խորհրդանշան մըն է սուրբաբանութեան համար, բայց է նախագահը: Յետոյ հրաւիրած է ներկայիցը յոյակայ յարգելի հանգուցեալ հայասեր ծովակալ Պրնուս տ'Արիի եւ բոլոր նահատակ հայորդիներուն յիշատակը:

Գեղարուեստական բաժնիցը եղած է շատ ճոխ: Խօսած է փրոֆ. Խայկեան: Կատարիցեան բաժնեման ողջոյնի քանի մը խօսք ըրած է: Յետոյ Տ. Թեքեանին յանձնուած է Մարտի գաղութին կողմէ նուիրուած ոսկեայ կենդանագիրք:

Մարտի մէջ, ամսոյն ծիւց, ի պատիւ Տ. Թեքեանի կատարուած է մեծարանգի հանդիսութիւն մը՝ ի ներկայութեան ընտիր բազմութեան մը: Նախագահած է ընկեր Վ. Միսիրը, որ ներկայացուցած է Տ. Թեքեանի արժանիքներն ու կատարած յոբերակները: Տ. Թեքեան խորհրդանշան մըն է սուրբաբանութեան համար, բայց է նախագահը: Յետոյ հրաւիրած է ներկայիցը յոյակայ յարգելի հանգուցեալ հայասեր ծովակալ Պրնուս տ'Արիի եւ բոլոր նահատակ հայորդիներուն յիշատակը:

Գեղարուեստական բաժնիցը եղած է շատ ճոխ: Խօսած է փրոֆ. Խայկեան: Կատարիցեան բաժնեման ողջոյնի քանի մը խօսք ըրած է: Յետոյ Տ. Թեքեանին յանձնուած է Մարտի գաղութին կողմէ նուիրուած ոսկեայ կենդանագիրք:

Գեղարուեստական բաժնիցը եղած է շատ ճոխ: Խօսած է փրոֆ. Խայկեան: Կատարիցեան բաժնեման ողջոյնի քանի մը խօսք ըրած է: Յետոյ Տ. Թեքեանին յանձնուած է Մարտի գաղութին կողմէ նուիրուած ոսկեայ կենդանագիրք:

Գեղարուեստական բաժնիցը եղած է շատ ճոխ: Խօսած է փրոֆ. Խայկեան: Կատարիցեան բաժնեման ողջոյնի քանի մը խօսք ըրած է: Յետոյ Տ. Թեքեանին յանձնուած է Մարտի գաղութին կողմէ նուիրուած ոսկեայ կենդանագիրք:

●1875. Ծնունդ Նիկոլ Աղբալեանի. ականաւոր գրաքննադատ. Հայաստանի Հանրապետութեան լուսաւորութեան նախարար եւ Համագայինի հիմնադիր:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱՆ

Լիբանանի ֆուտպոլի ֆեդերասիոնին որոշումով, անցելու շաբաթավերջին տեղի ունենալիք Ա. դասակարգի ախոյեանության 17րդ հանգրուանի մրցումները յետաձգվեցան, իրաքի վրայ տեղի ունեցող յարձակումներուն պատճառով:

Բ. դասակարգի ախոյեանության 20րդ հանգրուանի մրցումները, սակայն, որոնք սկսած էին Ուրբաթ օր, շարունակվեցան. շաբաթավերջին տեղի ունեցան մնացելու չորս ճակատումները:

2րդ դիրքը գրավող Հ. Մ. Մ., որ Թրիֆուրի մէջ հիւրն էր Ռիատա Ուալ Ատապի, կարելու յաղթանակ մը արձանագրեց, երբ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Պէյրուսի: Առհաս Ղատար նշանակեց մրցումին «որ» կողմ (13րդ):

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Հ. Մ. Մ. երեք կէտի առաւելութիւնը պահեց 3րդ դիրքը գրաւող Իսլամ Պրոֆ Շիմալիի վրայ: Վերջինը Շարաբ օր Պուրճ Համուտի Գաղաբայետարանի դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռասիւնը:

Ստորեւ՝ 20րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մահապպա - Իթրիմահի	3-1
Ռիատա Ուալ Ատապի - Հ. Մ. Մ.	0-1
Ռասիւն - Իսլամ	0-1
Շապպա Թրիֆուրի - Հ. Մ. Մ.	1-2
Ահլի Սալտա - Թատ. Նապաթիէ	1-2
Հըրրիէ - Նահտա	2-1

Ստորեւ՝ դասաւորումը.

ԿէՏ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.
1.- Հ. Մ. Մ.	14	3	0	43	9 45
2.- Հ. Մ. Մ.	11	4	3	40	24 37
3.- Իսլամ	9	7	2	29	16 34
4.- Ռասիւն	8	2	8	32	30 26
5.- Մահապպ	6	4	8	16	20 22
6.- Նապաթիէ	6	4	8	24	30 22
7.- Իթրիմահի	6	4	8	21	29 22
8.- Ռիատա	4	8	6	22	23 20
9.- Նահտա	5	2	10	18	25 17
10.- Սալտա	4	4	10	21	31 16
11.- Հըրրիէ	4	4	10	18	29 16
12.- Մահապպա	4	4	10	20	34 16

## ՖՈՐՄԱՆԻ 1 ՈԱՅԲՈՆՆԸ ՏԻՐԱՑԱԲ ՄԱԼԵԶԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ ԲԱԺԱԿԻՆ

Ֆորմուլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 2րդ հանգրուանի կրան փրին, որ տեղի ունեցաւ երէկ՝ Սըփանկի մէջ (Մալայզիա), դարձաւ վերջ գտաւ Մաքլարընի տիրապետութեամբ, երբ խումբին երկրորդ վարորդը՝ Քիմի Ռայքոնըն այս անգամ ինք եղաւ տար կէտը գրաւողը, այսպիսով իր կազմին ապահովելով եղանակի 26րդ կէտը: Նշենք, թէ եղանակի առաջին կրան փրին տիրացած էր Մաքլարընի բրիտանացի վարորդ Տէյվիտ Քուլթարտ: Ռայքոնըն իր սպարէպին ընթացքին առաջին անգամ ըլլալով էր, որ կրան փրի մը կը շահէր:



Քիմի Ռայքոնըն՝ իր շահած առաջին բաժակով

Յաջորդաբար երկրորդ կրան փրին ըլլալով, Ֆեռարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շումախըրը դարձաւ ներկայ չէր փոփոխուին վրայ, որովհետեւ երէկ յետ երկու անգամ արկածի, ան գրաւեց 6րդ դիրքը, 1 լէփ ուշացումով հասնելով ժամանան գիծ:

Շարաբ օրուան փոխ-փոխ 2 ը ն ի մրցումներուն երրորդ մախըր (Ուիլիըմս) յաւորման երրորդ դիրքը: Եղանակի երրորդ կրան փրին տեղի կ'ունենայ 6 Ապրիլին, Սան Փաուլոյի մէջ, Պրաչիլի:



Չախէն աջ՝ Պարիզելլո, Ռայքոնըն եւ Ալոնցո

Վերջինս որ այս մրցումներուն կը գրաւէ առաջին դիրքը, Ֆորմուլա 1ի պատմութեան մէջ: Նախ խումբ մը ունեցաւ Ռեյնոլի իտալացի վարորդ Եաննի Թրուլիի ինքնաշարժին, կրան փրին ետք յայտարարեց, թէ ինք էր բախումին պատճառը, հետեւաբար կու գայ ներդրութիւն խնդրելու անկէ:

Ստորեւ՝ երկուսն կրան փրին արդիւնքները.

- 1.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) Մաքլարըն 1 ժամ 32' 22"
- 2.- Ռուպէն Պարիզելլո (Պրաչիլի) Ֆեռարի 39' ուշ
- 3.- Ֆեռնանտո Ալոնցո (Սպանիա) Ռեյնո 1' 04" ուշ
- 4.- Ռայֆ Շումախըր (Գերմանիա) Ուիլիըմս 1' 28" ուշ
- 5.- Եաննի Թրուլի (Իտալիա) Ռեյնո 1 լէփ ուշ
- 6.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆեռարի 1 լէփ ուշ
- 7.- Ենսըն Պարթըն (Բրիտանիա) ՊԱՐ 1 լէփ ուշ
- 8.- Նիք Հիտֆէլտ (Գերմանիա) Սաուպըր 1 լէփ ուշ
- 9.- Հայնց-Հարալտ Ֆրենցըն (Գերմանիա) Սաուպըր 1 լէփ ուշ
- 10.- Ռայֆ Ֆիրմըն (Բրիտանիա) Ճորտըն 1 լէփ ուշ

Ստորեւ՝ վարորդներուն ընդհանուր դասաւորումը.

- 1.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) 16 կէտ
- 2.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) 10 կէտ
- 3.- Խուան Փապո Մոնթոյա (Բոլիւպիա) 8 կէտ
- 4.- Ռուպէն Պարիզելլո (Պրաչիլի) 8 կէտ
- 5.- Ֆեռնանտո Ալոնցո (Սպանիա) 8 կէտ
- 6.- Միքայէլ Շումախըր (Գերմանիա) 8 կէտ
- 7.- Եաննի Թրուլի (Իտալիա) 8 կէտ
- 8.- Ռայֆ Շումախըր (Գերմանիա) 6 կէտ
- 9.- Հայնց-Հարալտ Ֆրենցըն (Գերմանիա) 3 կէտ
- 10.- Ենսըն Պարթըն (Բրիտանիա) 2 կէտ
- 11.- Նիք Հիտֆէլտ (Գերմանիա) 1 կէտ

Ստորեւ՝ խումբներուն դասաւորումը.

- 1.- Մաքլարըն 26
- 2.- Ֆեռարի 16
- 3.- Ռեյնո 16
- 4.- Ուիլիըմս 14
- 5.- Սաուպըր 4
- 6.- ՊԱՐ 2

## ՓԻՆԿ ՓՈՆԿ ԼԱՐԱ ՔԵՉԵՊԱՇԵԱՆ ԲԱՐՉՐԱՑՈՒՑ ԲԱԺԱԿԸ

Լիբանանի փինկ փոնկի գարնանային մրցաշարքի աւարտականին, որ տեղի ունեցաւ երէկ՝ «Մոն Լա Սալ»ի մէջ, բաւական տաք եւ մարաթոն մրցումէ մը ետք վերջ գտաւ աղջկանց հանդիպումը, որ եղաւ զուտ Հ. Մ. Լ. Մ. ակադ: Թէեւ Լիզա Պարիբեան բաւական պայքարեցաւ տիրանալու համար տիտղոսին, սակայն Լարա Քեչեպաշեան ինք տարաւ վերջնական յաղթանակը, արձանագրելով 4-3 արդիւնք մը:

Ստորեւ՝ անցելու շաբաթավերջին Հ. Մ. Լ. Մ. ի աղջկաներուն արձանագրած արդիւնքները.

Լարա Քեչեպաշեան - Լարա Ջէյնէտտից	3-0
Լարա Քեչեպաշեան - Քրիսթել Ժալըի	3-0
Լարա Քեչեպաշեան - Ռիթա Պրետիպէս	4-0
Լարա Քեչեպաշեան - Լիզա Պարիբեան	4-3
Լիզա Պարիբեան - Մայա Պրետիպէս	3-0
Լիզա Պարիբեան - Ռանա Մըրջի	3-0
Լիզա Պարիբեան - Ռուպա Պրետիպէս	4-1
Նոէլ Քեչիշեան - Սիլվանա Ջըղպի	3-0
Նոէլ Քեչիշեան - Ռուպա Պրետիպէս	2-3

## ԱՐՄԵՆԱԼ ՄՆԱՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

24 ժամ պարագլուխի դիրքը գրաւելէ ետք, Մանչեսթըր Եունայթըտ երէկ դարձաւ նախանշեց 2րդ դիրք, նկատի ունեցալով որ Արսենալ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Էվըրթընը, իր ունեցած երկու կէտի առաւելութիւնը պահեց անոր վրայ: Փաքալ Սիլվըն (8րդ) եւ Փաթրիք Վիլքս (69րդ) նշանակեցին Արսենալի կուլերը, իսկ Ռեյն Բուսի՝ Էվըրթընի կուլ (56րդ):

Շաբաթ օր Մանչեսթըր Եունայթըտ իր դաշտին «Օլդ Թրեֆորտ»ի մէջ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ֆուլհեմը, շնորհիւ Ռուտ Վան Նեսթըրլոյի իրագործած հէթրիքին (45րդ, 68րդ եւ 90րդ):

## ՄԻՆԱՅ ՍԹՈՅՔԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻՉ

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերասիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեան անցելու շաբաթավերջին պաշտօնապէս յայտարարեց, թէ Շքեռու Պուրթէշի (Ռումանիա) մարզիչ Միխայ Սթոյքա նշանակուած է Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ:

Շքեռու Պուրթէշի հետ չորս անգամ Ռումանիոյ ֆուտպոլի ախոյեանութիւնը շահած Սթոյքա, մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց ֆեդերասիոնի հետ:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ ՄՈՆԱԲՕ ԵՒ ՄԱՐՍԷՅ ՅԱՂԹԵՑԻՆ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 31րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Մոնաքո եւ անոր անմիջական մրցակիցը՝ Մարսէյ օտար դաշտերու վրայ իրենց արձանագրած յաղթանակներուն շնորհիւ շարունակեցին մնալ իրենց դիրքերուն վրայ: Մոնաքո, որ իր ունեցած կուլերէյնի շնորհիւ կը գերապանցէ Մարսէյը, 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Լը Հաւըրը, մինչ Մարսէյ՝ Մոնպելիէն, 2 - 1:

Մարցաքաղաքի կազմը՝ Փարիզ Սէն Ժերմէն իր դաշտին «Փարք տէ Փրէնս»ի մէջ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Սրտանը, մինչ Օքսէր - Լանս եւ Պորտո - Նանթ ճակատումները վերջ գտան 0 - 0 արդիւնքով:

ԹԵՆԻՍ  
**ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ**

Ֆլորիտայի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող թենիսի տղոց «Մասթըրս»ի մրցաշարքի Բ. հանգրուանի մրցումներուն, 10րդ դասուած արձանաթիւնաւոր Դաւիթ Նալպանտեան յաջողեցաւ մրցաշարքէն դուրս ձգել պրաչիլիցի Ֆլաիթո Սարթթեան, արձանագրելով 4 - 6, 6 - 4 եւ 6 - 1 արդիւնքով յաղթանակ մը:

Բ. հանգրուանին, «կոնտրոլ» շարքին էին՝ 7րդ դասուած Մարաթ Սաֆին (Ռուսիա) եւ 8րդ դասուած Ժորի Նովաք (Չեխիա):

**100% ՏԵՄԱԿ**

**ՄԱՐՁԻԿ**  
ԻՐ. ՏԱՐԻ, 2003  
ԹԻՒ 2 (248)

**85 ԱՄԵՆԿ ՏԱՐԻՆ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Լ.Մ. ԿԵՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

- «Մարպիկ»ի այս թիւով տեսնել՝
- Նմանազրական - Հին սերունդը
- Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան օրերէն յուշեր - Շաւարշ Ա. քինյ. Մեհրապեան
- Վերանորոգ յանձնառութեամբ - Վարազ քինյ. Յովսէփեան
- «Հ.Մ.Լ.Մ.ական մարդու ապրումները» - Ժաք Յակոբեան
- Յիշողութեան եւ ներշնչումի գիրքը - Յակոբ Գալայճեան
- Հետախուզութիւն - Լեւոն Գապանճեան
- Հարցապրոց՝ Հայաստանի ճարտարական ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Գաղիկ Օհաննէսեանի հետ
- Սկզբունքներ կը պատմեն համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի իրենց փորձառութիւնները

Թիւր կ'ընդգրկէ նաեւ սկաւտական, մանկապատանեկան, համացանցի եւ նամակատուփի բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Լ.Մ.ական կեանքի անդրադարձներ:

Ստանալու համար դիմել Համագրային գրախանութ:

ՉԵՉԵՆԻԱ

ՀԱՆՐԱՔՈՒԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՔՈՒԷԱՐԿՈՂՆԵՐՈՒՆ ԱՒԵԼԻ ՔԱՆ 65 ԱՌ ՀԱՐԻՐԸ

Չէչենիոյ մէջ երէկ տեղի ունեցաւ հանրաքուէ մը, որ ըստ Մոսկուայի խաղաղութիւն ու կայունութիւն պիտի բերէ շրջանին եւ վերջ պիտի տայ անջատողական ծրագիրներուն:


Հակառակ տիրող թերահաւատութեան, հանրաքուէին ունեանալիք արդիւնքի մասին չէչեն քուէարկողներուն աւելի քան 65 առ հարիւր մասնակցեցաւ հանրաքուէին՝ պատասխանելով անոր երեք հարցումներուն. «Կ'ուզե՞ք նոր սահմանադրութիւն մը, նախագահի եւ խորհրդարանի ընտրութիւններ:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին հանրաքուէն ներկայացուցած էր, իբրեւ հաստատ քայլ մը, որ ճամբան կը բանայ խաղաղութեան դիմաց: Հանրաքուէն քննադատողները սակայն կ'ըսեն, որ անիկա անիմաստ է հանրապետութեան մը մէջ, ուր պատերազմը աւերներ կը գործէ: Անոնք դիտել կու տան, որ հարցը կրնայ լուծուիլ, երբ Փութին ընդունի բանակցութիւններ կատարել անջատողականներուն հետ: Սակայն Փութին բացարձակապէս կը մերժէ բանակցի ըմբոստ ուժերուն ներկայացուցիչներուն հետ:

Քուէարկութեան հսկող եւրոպացի դէտ մը ըսաւ, որ թէեւ տիրող պայմանները կատարեալ չեն, բայց նայալիս հանրաքուէն դրական քայլ մըն է քաղաքական գործընթացը սկսելու համար:

(ԱՅՓ)

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ, ԹԷ ԻՐԱՔԻ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՍԸ ՆԱԽԸՆԹԱՑ ԿՐՆԱՅ ԴԱՌՆԱԼ ԱՅԼ ՊԱՏԵՐԱԶՍՆԵՐՈՒ



Եռշքա Ֆիշըր

Գերմանիա մտահոգ է, որ Իրաքի դէմ պատերազմը նախընթաց մը պիտի դառնայ այլ երկիրներու դէմ «ապապիման պատերազմներուն»:

«Տէր Շփիլը» օրաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ, արտաքին գործոց նախարար Եռշքա Ֆիշըր քննադատեց Իրաքի պատերազմը եւ կոչ ուղղեց եւրոպացի ղեկավարներուն՝ միացնելու իրենց ուժերը, հակակշիռի տակ առնելու համար ամերիկեան ուժը: Ֆիշըր վզուցուց, որ այսպիսի պատերազմ մը կրնայ ճամբան բանալ այլ պատերազմներու դիմաց:

Ֆիշըր դիտել տուաւ, որ Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Պիլ Բիլնթըն Հիւսիսային Քորէայի կորիկային պէնթերոն տագնապը յաջողեցաւ լուծել դիւանագիտական միջոցներով: Նոր վարչամեթենան սակայն վերատեսութեան ենթարկեց այդ քաղաքականութիւնը: Ֆիշըր դատապարտեց Միացեալ Նահանգները ՄԱԿի մէջ տիրող մթնոլորտը անտեսած եւ պիտուրական գործողութեան դիմած ըլլալուն համար:

Նշենք, որ Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ ղեկավարած ճակատին խստի ընդդիմացող դաշինքին գլխաւոր կողմերէն մէկն է Գերմանիա՝ Ֆրանսայի եւ Ռուսիոյ կողքին:

Միւս կողմէ, Եգիպտոսի նախագահ Հիւսի Մուպարաբ, որ Արեւմուտքի գլխաւոր դաշնակիցներէն մէկը կը նկատուի շրջանին մէջ, մտավախութիւն ունի, որ Իրաքի դէմ ամերիկեալ բրիտանական պատերազմը «պիտի քաշքշուի» եւ նախատեսուածին նման արագ եզրակացութիւն մը պիտի չունենայ: Մուպարաբ աւելցուց, որ երբ ամերիկացիներուն հետ կը խօսէր, իրեն ըսուած էր, թէ կարճ պատերազմ մը պիտի ըլլայ, սակայն իրաքցիներուն ցուցաբերած ընդդիմութիւնը հակառակը նախատեսել կու տայ:

(ԱՅՓ)

ԱՇԽԱՐԸ Կ'ԵՌԱՅ ԻՐԱՔԻ ԸԱՐՅՈՎ. ՊԱՏԵՐԱԶՍԻՆ ԴԵՍ ԿԵՑՈՒԱԾԵՆԵՐԸ ԸՏՋՐԵՏԷ ԿԸ ԾԱԲԱԼԻՆ

Իրաքի դէմ պատերազմին շարժող ուժը ըլլալով, աշխարհիս չորս ծագերուն շարունակուեցաւ ծաւալիլ պատերազմը դատապարտող ալիքը: Բողոքի ցոյցերը համախըմբեցին միլիոնաւոր մարդիկ վանապան երկիրներու մէջ: Որոշ քաղաքներու մէջ բախումներ տեղի ունեցան ոստիկանութեան հետ:

Եւրոպայի եւ Հիւսիսային Ամերիկայի մէջ, Շաբաթ օր աւելի քան մէկ միլիոն քաղաքացիներ կատարեցին ցոյցեր, իբրեւ բողոք Ուաշինկթընի եւ Լոնտոնի կողմէ Իրաքի դէմ պատերազմին եւ արհեստագործութեան:

Լոնտոնի քաղաքապետը՝ Քէն Լիվինկսթըն յայտնեց, որ Լոնտոնի մէջ տեղի ունեցած Շաբաթ օրուան քայլաքաշը յետ Բ. Աշխարհամարտի պատմութեան մէջ Բրիտանիոյ ցոյցերուն մեծագոյնն է:

Լիվինկսթըն շեշտեց, որ Լոնտոնի մէջ ցուցարարներուն թիւը աւելի քան 700,000 էր եւ ցուցարարները վարչապետ Թոնի Բլէրի կոչ կ'ուղղէին սկսելու տալ բրիտանացի ժողովուրդին, քան իր մտերմին՝ Մ. Նահանգներու ուժերը ճանաչելու ճորձը: Միւս կողմէ նախագահ ձորձ Պուշին:

Աստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ աւելի քան 40,000 ցուցարարներ, իսկ Մելպուրն քաղաքին մէջ 100 ընտանիքներ փողոց իջան՝ դատապարտելով ցոյցերը:

Տարբեր քաղաքներու մէջ, ինչպէս՝ Լահոր, Փաքիստան, 100,000 ցուցարարներ, ձաքարթայի մէջ՝ 1,500, Պարսելունայի



Լոնտոնի աճապարհաց ցոյցէն տեսարան մը

մէջ 500էն 750,000, Մատրիտի մէջ՝ 250,000, Հոնոնի մէջ աւելի քան 100,000, Փարիզի մէջ աւելի քան 250,000, Գերմանիոյ մէջ աւելի քան 150,000 ցուցարարներ միեւնոյն նպատակով գրաւեցին փողոցները:

Օսլոյի մէջ աւելի քան 200 ցուցարարներ բռնութիւններ ունեցան ոստիկանութեան հետ, իսկ Յուստանի մէջ՝ 150էն 200,000 ցուցարարներ պահանջեցին Եւրոպայի միջամտութիւնը: Նոյն պահանջով ներկայացան 500,000 ցուցարարներ՝ Վիեննայի մէջ, 100,000՝ Նիւ Եորքի, 200,000՝ Մոնթրէալի, 20,000՝ Գահիրէի մէջ, որոնք հրկիզեցին ամերիկեան, բրիտանական եւ իսրայիլեան դրօշակներ:

Կապայի մէջ 10,000 ցուցարարներ քայլաքաշ մը կատարեցին առ ի պարակցութիւն իրաքցի ժողովուրդին:

Այսուհանդերձ, արաբական երկիրներու մէջ ցոյցերը կը մնան անէնէն տկար, իսկ ցարդ ամէնէն ուշագրաւ կը հանդիսանան Եւրոպայի տարածքին տեղի ունեցող պողոթնները, որոնք ունին առաւելաբար քաղաքական խորք: Ինչ կը վերաբերի Հարաւային Ամերիկայի, ապա հոն տեղի ունեցող ցոյցերը առաւելաբար հակաամերիկեան բնոյթ ունին, քան փրօ-իրաքեան, ինչպէս նաեւ անոնք բոլորէն աւելի վերածուեցան խոշորութիւններու:

Հակառակ այս բոլորին, սակայն, Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կը մնան անդրդուելի իրենց խօլ արշաւին մէջ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԴԱՐՉԵԱԼ ԿԱԶԱ ՆԵՐԽՈՒԺԵՑ

ԿԱԶԱ, 23 (ԱՅՓ).- Իսրայիլեան բանակը քանի մը գործողութիւններու ձեռնարկած է Կապայի դէմ: Պաղեստինեան աղբիւրներ հաղորդեցին, որ Շաբաթէն Կիրակի լուսնոց գիշերուան ընթացքին, իսրայիլեան ուժերը Կապայի քանի մը շրջանները ներխուժած են:

Ներխուժումներէն մէկը թիրախ դարձուցած է Տէյր Պալահ գիւղը, ուր իսրայիլեան ուժերը մտած են պոլիտպրիստներով եւ իրասայլերով: Անոնք քանդած են 73ամեայ ծերունիի մը բնակարանը: Երկրորդ գործողութեան թիրախը դարձած է Խան Եունէսի եւ Ռաֆահի միջեւ գտնուող շրջան մը, ուր պիտուրները վիրաւորեցին երկու պաղեստինցիներ:

Իսրայիլեան բանակը իր կարգին յայտնեց, որ երկու հոգի ձերբակալած է Ժենիւնի մէջ, երկու ուրիշներ ալ՝ Ռամալայի մօտ:

ԱՄԵՐԻԿԵՐԻՏԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԻՐԱՔԵԱՆ ԼՈՒՐՁ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸ



Ամերիկացի գերիցներ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՕԴԱՆԱԲ ՄԸ Կ'ԻՅՆԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՐԹՈՒՈՎ

Ամերիկեան աղբիւրներ հաստատեցին, որ ամերիկեան «Փէթրիլթ» հակահրթիռային հրթիռ մը վար առած է բրիտանական օդանաւ մը, երէկ, Օոցի մէջ: Վար առնուած օդանաւը «Թոռնէյտօ» էր:

Իրաքի դէմ արձակուած հրթիռներէն քանի մը հատը ճամբան շեղելով ինկած է սահմանակից Իրանի վրայ, ուր երեք հոգի վիրաւորուած է: Ներքին գործոց նախարարը ըսաւ, որ ինկած քանի մը ռումբերէն մէկը իրաքեան կրնայ ըլլալ, մինչ անացեալը ամերիկեան եւ բրիտանական են:


ՄԻԶԱԴԵՊ՝ ԸՈՒԷՅՈՒ ՄԵՋ

Քուէարկութեան խարխիւներէն մէկուն մէջ գտնուող ամերիկեան ուժերէն պիտուր մը երէկ առտու ձեռնառումներ նետեց իր պինակիցներուն վրայ՝ մէկ զոհ եւ 12 վիրաւոր պատճառելով: Լրատու աղբիւրներ հաղորդեցին, որ պիտուրը խոստովանած է արարքը:

(ԱՅՓ)

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՈՒՐԱԹ, 28 ՄԱՐՏ 2003, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 8:30ԻՆ «ԻՒՆԵՍԸՕ»Ի ՄՐԱՇԻՆ ՄԵՋ

Տոմսերը ստանալ հետեւեալ գրատուներէ՝ «Նարեկացի» Պ. Շամուտ, «Շամազգային» Շաղոյեան կեղղոն եւ Ազգային վարժարաններէն:



BALTAYAN ELECTRONIC advertisement featuring various electronic products like a camera, mobile phone, and other gadgets.